

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Ռուսաստանի Բացատրությունները Եւ Ընդդիմադրութեան Չախողումը

44-օրեայ պատերազմի աւարտի առաջին տարեկիցին առթիւ Ռուսաստանի կողմէ հնչեցին բաւականին ուշագրաւ յայտարարութիւններ, որոնք եկան ցոյց տալու թէ, որքան զգայուն դարձած է Մոսկուան Հայաստանի հասարակութեան մօտ իր նկատմամբ ձեւաւորուող հանրային կարծիքին նկատմամբ, նոյն ատեն համաձայնելով Երեւանի պաշտօնական կեցուածքին հետ՝ կապուած տարածաշրջանային հաղորդակցութեան միջոցներու ապաշրջափակման եւ իւրաքանչիւր կողմի ինքնիշխանութեան վերաբերեալ:

Ռուսաստանի փոխ-վարչապետ Ալեքսեյ Օվերչուք այցելելով Երեւան յայտարարեց, որ, Հայաստանի ու Ատրպեյճանի միջեւ ճանապարհներու ապաշրջափակման հարցով լուծումները առաջին հերթին կը հիմնուին այն հանգամանքին վրայ, որ այդ ճանապարհներու ինքնիշխանութիւնը պիտի մնայ իւրաքանչիւր պետութեան: Այսպիսով Մոսկուան կու գայ համաձայնելու Հայկական կողմի բազմիցս հնչեցուցած այն դիրքորոշման հետ, որ Հայաստանի ինքնիշխան հողին վրայ Ատրպեյճանին միջանցք տրամադրելու հարցը իր օրակարգին վրայ չկայ ու չի կրնար ըլլալ:

Երկրորդ յայտարարութիւնը, որ հրապարակուեցաւ Ռուսաստանի Արտաքին գործոց Նախարարութեան կողմէ, կ'անդրադառնայ Հայ-Ռուսական յարաբերութիւններուն եւ տարածաշրջանէն ներս Մոսկուայի նկրտումներուն: «Եռակողմ յայտարարութիւնը ընդունելէն մէկ տարի անց կարելի է վստահ հերթել ընկերային ցանցերով եւ համացանցային միջոցներով հաղորդումները այն մասին, որ, Ռուսաստանի խաղաղապահ ջանքերը ուղղուած էին Լեռնային Ղարաբաղը անջատելուն, Ատրպեյճանին յանձնելուն, Հայաստանը հովանաւորող վերածելուն: Նմանօրինակ յայտարարութիւնները կը կրեն ժողովրդական բնոյթ, կը կատարեն ակնյայտ արտաքին պատուէր եւ իրականութեան հետ որեւէ աղերս չունին», ըսուած է Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին գործոց Նախարարութեան պաշտօնական յայտարարութեան մէջ: Այս առթիւ Մոսկուան չէ մոռցած նաեւ Հայ եւ միջազգային կառոյցներուն ըսելու որ, ինք մենաշնորհը չունի տա-

Ճանապարհներու Ինքնիշխանութիւնը Կը Պահպանուի Այն Երկիրներու Մօտ, Որոնց Տարածքով Կ'անցնին Անոնք. Օվերչուքը՝ Փաշինեանին

Նոյեմբեր 8-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման ընթացքին Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուք յայտարարած է որ, «Հայաստանի ու Ատրպեյճանի միջեւ ճանապարհներու ապաշրջափակման հարցով լուծումները առաջին հերթին կը հիմնուին այն հանգամանքին վրայ, որ այդ ճանապարհներու ինքնիշխանութիւնը պիտի մնայ այդ պետութեան»:

«Դուք գիտէք, որ աշխատած են նաեւ ճանապարհաշինութեան ոլորտի փորձագէտներ, որոնք հետազոտած են ճանապարհները: Այսօր ունինք շատ լաւ պատկերացումներ, թէ իրականութեան մէջ ինչպիսին է ճանապարհներու վիճակը: Հոկտեմբեր 22-ին կայացած համատեղ աշխատանքային խումբի 8-րդ նիստին յետոյ, մեզի կը թուար, որ կը յանգինք յստակ լուծումներու», - նշած է Օվերչուքը:

Այսպիսի յայտարարութիւնը ըրած է նաեւ Ռուսաստանի Արտաքին գործոց Նախարարութիւնը յայտնելով, որ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպեյճանի եռակողմ աշխատանքային խումբի բոլոր կողմերը համաձայնած են՝ ապաշրջափակուած բոլոր ճանա-



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Երեւանի մէջ կ'ընդունի Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուքին

պարհները պիտի շահագործուին պետութիւններու ինքնիշխանութեան տարածքային ամբողջականութեան յարգանքի հիման վրայ: Ատրպեյճանն ու Թուրքիան ապաշրջափակման մասին խօսելու ատեն կը կիրառեն «Ձանգեզուրի միջանցք» եզրույթը, որ կտրակաւնայ կը մերժէ Հայաստանը: Վարչապետ Նիկոլ Փաշինեան աշխատանքային խումբին մէջ Ռու-

սաստանը ներկայացնող փոխվարչապետը Երեւան մէջ ընդունելով վերստին յայտարարած է, որ Ատրպեյճանը միջանցքի մասին խօսելով կը փորձէ պարտադրել իր ընկալումները փոխվարչապետի համանախագահութեամբ գործող յանձնաժողովին, որ Հայաստանի համար անընդունելի է:

Շքեղ ճաշկերոյթով Նշուեցաւ ՀՄՄ-ի Հիմնադրութեան 100-Ամեակը



ՀՄՄ-ին մատուցած իրենց երկարամեայ ծառայութեան համար «Պատուոյ Գիրի» արժանացած Միութեան անդամները

Նոյեմբեր 6-ի երեկոյեան ՀԿԲՄ-ի Փաստինայի կեդրոնի սրահէն ներս նշուեցաւ Միութեան հաշկական մարզական մեծագոյն կազմակերպութիւններէն՝ Հայ Մարմնամարզական Միութիւնը (ՀՄՄ) հիմնադրութեան 100-ամեակը: Պատմական այս մեծ իրադրութեան առթիւ նախատեսուած պաշտօնական եւ այլ միջոցառումները յետաձգուեցան յառաջիկայ տարուան, քորոնա ժահրի կապակցութեամբ ստեղծուած սահմանա-

փակումներուն պատճառով: Այսուհանդերձ մեծ թիւով Միութեան անդամներ ու համակիրներ ներկայ էին 100-ամեակի մեկնարկն ազդարարող ճաշկերոյթ-պարահանդէսին: Ներկաներուն մէջ էին ՍԴՀԿ-ի Կեդրոնական վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի անդամներ, տարբեր շրջաններու եւ ժամանակներու Հ.Մ.Մ.-ի նախկին ղեկավարներ եւ

ԱՄՆ-ի Նախագահը Հայաստանը Հրաւիրած Է Ժողովրդավարութեան Գագաթնաժողովին

Միացեալ Նահանգներու նախագահ՝ Ժօ Պայտըն Հայաստանը հրաւիրած է ժողովրդավարութեան հարցերով գագաթնաժողովի, որ, Սպիտակ տան հաղորդմամբ, տեղի պիտի ունենայ յաջորդ ամիս:

Հայաստանի հարեւաններէն հրաւիրեալներու շարքին է միայն Վրաստանը: Յուցակին մէջ, ներառուած չեն ոչ Ատրպեյճանը, ոչ Թուրքիան եւ ոչ ալ Իրանը: Նախկին ԽՍՀՄ տարածքէն Մերձպալթեան երկիրներէն բացի հրաւիրուած են միայն 4-ը՝ Հայաստանը, Վրաստանը, Մոլդովիան եւ Ռուքրանիան: Ռուսաստանէն բացի հրաւիր չէ ստացած նաեւ Չինաստան:

Դեռ տարեկիցքին՝ պաշտօնաւճարտի առաջին իսկ ելոյթներուն, Պայտըն նշած էր, որ հաստատակամ է ընելու առաւելագոյնը, որ աշխարհին մէջ ժողովրդավարութիւնը ամրապնդէ, Ռուսաստանի ու Չինաստանի նկրտումներուն հակադրելու համար: «Ամերիկան պատրաստ է վերստին իր վրայ վերցնել առաջնորդութիւնը աշ-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Ես ճիշտ եի, Դուք՝ Սխալ»։ Ում եւ Ինչ է Ակնարկում ՌԴ ԱԳՆ-Ը Յանկարծ

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Եռակողմ յայտարարութեան ընդունումից մէկ տարի անց կարելի է վստահ հերքել սոցիալական ցանցերում եւ ինտերնետային ռե-սուրաներում հաղորդումներն այն մասին, որ «Ռուսաստանի խաղաղապահ ջանքերն ուղղուած էին Լեռնային Ղարաբաղն անջատելուն, Ատրպէյճանին յանձնելուն, Հայաստանը «պրոտեկտորատի» վերածելուն»։ «Նմանօրինակ յայտարարութիւնները կրում են պոպուլիստական բնոյթ, կատարում են ակնյայտ արտաքին պատուէր եւ իրականութեան հետ որեւէ աղերս չունեն»։

Շատերին կարող է թուալ, թէ վերը բերուած մտքերն ու մէջբերումը Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքում Ռուսաստանի «պատուի ու արժանապատուութեան» անխոնջ պաշտպաններից որեւէ մէկին են, կամ Ռուսաստանին անմնացորդ հաւատարմութեան դիրքերից ներկայացող քաղաքական որեւէ ուժի ներկայացուցչինը կամ առաջնորդինը։

Շատերին կարող է այդպէս թուալ, եթէ նրանք ծանօթ չեն Ռուսաստանի արտգործնախարարութեան յայտարարութեանը, որ Նոյեմբերի 9-ի հրադադարի տարեկիցի առիթով արտայայտուել է ռուսական մետախի միջոցով։ Ամբողջ հարցն այն է, որ ՄԱԿ Անվտանգութեան Խորհրդի հինգ մշտական անդամներից մէկը հանդիսա-

ցող միջուկային տէրութիւնն ԱԳՆ յայտարարութեան մակարդակով փաստորէն «կոխ է տալիս» սոցցանցերի եւ ինտերնետային լրատուամիջոցների դէմ, ըստ էութեան ասելով՝ «տեսա՞ք, որ ես ճիշտ էի, իսկ դուք՝ սխալ»։

Այդ ամէնն իհարկէ ծիծաղելի կը լինէր, եթէ չլինէր մտորելու առիթ տուող, թէ այդ ինչ է պատահել, որ Ռուսաստանի արտգործնախարարութիւնը, նախ՝ որոշել է այդ կոխը տալ սոցցանցերի եւ ինտերնետային մամուլի դէմ, եւ երկրորդ՝ որոշել է անել դա Նոյեմբերի 9-ի տարեկիցի առիթով։ Չէ՞ որ Ռուսաստանը կարող էր աւելի «օպերատիւ» ռեժիմում հերքել իրեն ուղղուած այն մեղադրանքները, որոնց անդրադառնում է Նոյեմբերի 5-ին տարածած յայտարարութեան մէջ։ Մոսկուան համակուել է «խղճի խայթով», թէ՞ այնուհանդերձ իրավիճակը պարունակում է տողատակեր, որոնք յայտնի են միայն յայտարարութեան հեղինակներին կամ «պատուիրատուներին», իսկ յայտարարութիւնն ինքնին «փափուկ բարձ» է Հայաստանի հանրութեան ու հայ ժողովրդի համար, որեւէ կոշտ գործողութիւնից կամ հեռանկարից առաջ։

Առաւել եւս, որ կրեմլը այդ ընթացքում նաեւ խոստովանեց, որ ծրագրում է անցկացնել Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարների ու ՌԴ նախագահի մասնակցութեամբ հանդիպում, տեսակոն-

ֆերանսի ձեւաչափով։ Ի դէպ, հետաքրքիր է, ուղիղ հանդիպումից հրաժարուել են Հայաստանը կամ Ատրպէյճանը, թէ՞ ՌԴ նախագահ Փութինը, որն ինչպէս յայտնի է պարբերաբար բաւականին զգայուն է դառնում համաձայնակի հանդէպ։

Սակայն այն, որ տեսական ժամանակ կրեմլը չէր խօսում հանդիպում նախաձեռնելու մասին, վկայում էր, որ այդուհանդերձ ձգտում էին հասնել առաւելագոյնին, այսինքն Մոսկուայում հանդիպման կազմակերպման, սակայն ինչ-ինչ պատճառներով հարկ է եղել բաւարարուել տեսակոնֆերանսի ձեւաչափով։ Պէտք է համաձայնել, որ դա արդէն բոլորովին այլ միջավայր է, քան ուղիղ հանդիպումը, եւ զգալիօրէն աւելի «փափուկ» միջավայր նրանց համար, ովքեր հանդիպում են փութինի հետ։

Վերադառնալով ՌԴ ԱԳՆ յայտարարութեանը, պէտք է նկատել երեւի թէ, որ այն կարող է միտուած լինել հենց ՌԴ համար «փափուկ միջավայր» ձեւաւորելուն, եւ հենց այն նպատակների ուղղութեամբ աշխատանքի ճանապարհին, որոնք հերքում են Նոյեմբերի 5-ի յայտարարութեամբ։ Այլ կերպ ասած, հերքելով, Մոսկուան թերեւս փորձում է իրեն ազատել աւելորդ հանրային կշտամբանքից եւ իր «հերքած» նպատակների ուղղութեամբ աշխատել համեմատաբար աւելի թեթեւ ռեժիմում։

Սա իհարկէ կարող է լինել ընդամենը մի վարկած, թէ ինչու այդպէս՝ յանկարծ...:

Մեծ առումով, իհարկէ Մոսկուայի նպատակը չէր կարող լինել Արցախը Ատրպէյճանին յանձնելը։ Աւելին, նպատակը թերեւս հենց հակառակն է՝ թոյլ չտալ, որ Արցախը յանկարծ յանձնուի Ատրպէյճանին։ Իհարկէ այստեղ հարկ է նկատել, որ տարբեր են Արցախի սահմանների եւ տարածքի մասին մեր՝ հայերիս, եւ ՌԴ պատկերացումները։ Ինչ վերաբերում է Հայաստանը պրոտեկտորատի վերածելուն, ապա այստեղ էլ, որեւէ զարմանալի բան չկայ, որ Ռուսաստանը չի ուզում դա։ Չուզենալ վերածել պրոտեկտորատի, չի նշանակում, թէ չի ուզում ունենալ անկասկած ազդեցութիւն։ Բայց այլ է քաղաքական, տնտեսական, ռազմական ազդեցութեան լծակների ամբողջութիւնն ու ամրութիւնը, եւ այլ է «պրոտեկտորատը» այսպէս ասած իրաւական ռեժիմում։

Բուն խնդիրը մնում է այն, թէ ինչու՞ է Մոսկուան որոշել բարձրաձայնել այդ մասին այժմ, Պաքուի ակնաչի համար փաստորէն ընդգծելով, որ «Լեռնային Ղարաբաղը չի յանձնել» Ատրպէյճանին։ Դրանով յանձնմա՞ն «գին» են բարձրացնում, թէ՞ ակնարկում, որ Պաքուն կարող է թանկ վճարել, եթէ կասկածի տակ դնի խաղաղապահների մանդատն ու դրա երկարաձգման հեռանկարը։

«ԵՐԵՎԱՆ ԼՈՒՐ»

Արդարադատութիւն Եօթ Տարի Անց

ԼՈՒՍԻՆԷ ՍԽԻԴԱՐԵԱՆ

Մարդու իրաւունքների եւրոպական Դատարանը (ՄԻԵԴ) նախօրէին հրապարակել էր Տաւուշի մարզի վերին կարմիրաղբիւր գիւղի բնակիչ Մամիկոն Խոջոյեանի եւ Չինարի գիւղի բնակիչ կարէն Պետրոսեանի գործերով վճիռները, որոնք ապօրինի ազատազրկուել էին Ատրպէյճանի կողմից եւ խոշտանգուել դեռեւս 2014 թ.։ ՄԻԵԴ կայքը տեղեկացնում է, որ դատարանը երկու դէպքում էլ արձանագրել է, որ խախտուել են նրանց կեանքի, խոշտանգումներից զերծ մնալու, ազատութեան, անձնական անձեռնմխելիութեան իրաւունքները, եւ Ատրպէյճանին պարտաւորեցրել է իւրաքանչիւր գործով վճարել 40 հազարական եւրօ փոխհատուցում։

Թէ Մամիկոն Խոջոյեանը, թէ կարէն Պետրոսեանը ձերբակալուել էին Ատրպէյճանի գիւղուած ուժերի գինձառայողների կողմից, երբ տեղանքում չկողմնորոշուելու հետեւանքով հատել էին ՀՀ սահմանը։ 77-ամեայ Մ. Խոջոյեանը ձերբակալուել էր 2014-ի Յունուարի 28-ին՝ Ատրպէյճանում մնալով մինչեւ Մարտի 4-ը։ Հայաստան վերադառնալուց որոշ ժամանակ անց նա մահացել էր։ Դատաբժշկական փորձաքննութիւնը ցոյց էր տուել, որ վերջինիս մահուան պատճառ է եղել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան։ կարէն Պետրոսեանը մոլորուել էր 2014 թ. Օգոստոսի 7-ին, եւ փորձ էր արւում նրան ներկայացնել որպէս դիւերոսանտ։ Ընդամենը մէկ օր անց Պետրոսեանը մահացել է, իսկ Ատրպէյճանական կողմը որպէս մահուան պատճառ փորձում էր ներկայացնել

սրտի կաթուածը։

Վերոյիշեալ դէպքերի տրամաբանութիւնն ամբողջութեամբ համապատասխանում է այդ երկրի վարած հայատեաց քաղաքականութեանը, որն իր մասսայական դրսեւորումն ստացաւ պատերազմի ընթացքում։ Առայսօր Ատրպէյճանը չի յայտնում իր բանտերում պահուող հայ գերիների յստակ թուաքանակը, աւելին՝ նրանցից որոշների նկատմամբ յարուցել է շինծու քրէական գործեր եւ կայացրել անհիմն վճիռներ։

ՄԻԵԴ-ի նախօրէին հրապարակած վճիռները մէկ անգամ եւս ապացուցում են, որ Ատրպէյճանը երբեւէ չի յարգել եւ չի պահպանել մարդու իրաւունքներն ու միջազգային իրաւունքի այլ նորմեր։ Պատերազմի ընթացքում, մասնաւորապէս՝ սոցիալական ցանցերում, Ատրպէյճանցիների կողմից տարբեր խօսքի բազմաթիւ արձանագրումներ կան, որոնք արտացոլում են այդ պետութեան վարած քարոզչութիւնը։

Այս ամէնը միջազգային ատեաններում ներկայացնելու պարագայում ամբողջական կը դառնայ եւ կը հաստատուի Ատրպէյճանի իշխանութիւնների վարած հայատեաց քաղաքականութիւնը, որի հիման վրայ տասնամեակներ շարունակ դաստիարակուել է այդ երկրի հասարակութիւնը՝ թէ՛ Արցախի Հանրապետութիւնում, թէ՛ Հայաստանի Հանրապետութիւնում եւ թէ՛ սփիւռքում բնակուող էթնիկ հայերի նկատմամբ յանցագործութիւնների պատճառ դառնալով։ Նկատենք, որ պատերազմի օրերին հայերը գերծ չէին մնում ազրեսիայի դրսեւորումներից եւ ահաբե-

կումներից նաեւ այն պետութիւններում, որտեղ ապրում են թուրքական կամ ատրպէյճանական համայնքների ներկայացուցիչներ։ Պղծում էին նաեւ հայկական մշակութային կոթողները։ Ատրպէյճանի կողմից ռասսայական խտրականութեան առկայութիւնն ու պետական մակարդակով խրախուսուող հայատեացութիւնը հարկաւոր է պարբերաբար արձանագրել թէ՛ իրաւական, թէ՛ քաղաքական եւ թէ՛ հասարակական տիրոջներում, որպէսզի պարզ դառնայ միջազգային հանրութեանը, որ այդ երկիրը դեռեւս շատ հեռու է խաղաղասէր լինելուց։

Ի դէպ, երէկ Ատրպէյճանի Միլի մէջլիսը հաւանութիւն է տուել Նոյեմբերի 8-ի՝ այսպէս ասած՝ «Յաղթանակի օրուայ կապակցութեամբ» համաներում յայտարարելու Ալիեւի ստորագրութեամբ ներկայացուած նախագծին։ Այս ակտով համաներում կը շնորհուի աւելի քան 16 հազար դատապարտեալի, ինչն ամենազանգուածայինն է այդ երկրի պատմութեան մէջ։ Նրանցից ազատ կ'արձակուի ազատազրկման վայրերում պատիժ կրող աւելի քան 3 հազար քաղաքացի։ Նախատեսուած է նաեւ, որ պատժի չկրած մասից կ'ազատուի մինչեւ 3 հազար մարդ։ Հարց է առաջանում, թէ ինչով են զբաղուելու այդ դատապարտեալները ազատութեան մէջ յայտնուելուց յետոյ։ Հաշուի առնելով այդ երկրի որդեգրած քաղաքականութիւնը՝ ուրուագծւում են նոր մարտահրաւէրներ եւ վտանգներ յատկապէս Արցախում ապրող մեր հայրենակիցների կեանքի ու անվտանգ-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Վարչապետը Պարզաբանած է, Թե Ինչու Կը Չգծողի Պատերազմի Հանգամանքները Ուսումնասիրող Քննիչ Յանձնաժողովի Ստեղծումը

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան պարզաբանած է, թէ ինչու կը ձգձգուի Ազգային ժողովին մէջ արցախեան 44-օրեայ պատերազմի պատճառներն ու հետեւանքները քննող յանձնաժողովի ստեղծման գործընթացը:

Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին Փաշինեան անդրադարձած է հարցին, թէ ե՞րբ կը ստեղծուի Ազգային ժողովի յանձնաժողով, որ կը քննէ պատերազմի պատճառները եւ արդիւնքները, ինչպէս նաեւ ընդդիմութեան յայտարարութեան, թէ կը պոչքոթին յանձնաժողովի աշխատանքին դէմ, եթէ այնտեղ ուժերու համամասնութիւնը խախտուի:

«Մենք այնտեղ ուժերի հաւասարակշռութեան մասին ե՞նք խօսում, թէ՞ ճշմարտութեան բացայայտման մասին ենք խօսում: Ի վերջոյ, այնտեղ տեղի է ունենալու բովանդակային քննարկում եւ որեւէ մէկը չի կարող որեւէ մէկին արգելել արտայայտել իր կարծիքը: Յաջորդ հարցը, թէ երբ կը ստեղծուի յանձնաժողովը: Ըստ էութեան, տեսէ՞ք՝ ինչո՞ւ մինչեւ հիմա չի ստեղծուել յանձնաժողովը: Շատ պարզ պատճառով: Նախ, գիտէ՞ք, որ յանձնաժողովը գործնականում ստեղծուած է, որովհետեւ «Աժ կանոնակարգ» օրէնքի համաձայն՝ անվտանգութեան ոլորտում քննիչ յանձնաժողովի դերը կատարելու է նոյն անվտանգութեան, պաշտպանութեան հարցերով խորհրդարանական յանձնաժողովը: Այսինքն՝ յանձնաժողովը կայ, գոյութիւն ունի: Մինչ հիմա ինչո՞ւ չի ստեղծուել: Որովհետեւ նախ ընդդիմադիր պատգամաւորները ոչ բոլորն են դիմել եւ ստացել պետական յոյժ գաղտնի նիւթերի հետ առնչուելու թոյլտուութիւն: Դրա համար կայ օրէնքով նախատեսուած գործընթաց, իսկ այնտեղ նիւթերի մեծ մասը քննարկուելու է յոյժ գաղտնիութեան ռեժիմով», - ըսած է Փաշինեան:

Ան աւելցուցած է, որ պայմանաւորութեամբ թիւն ունին, որ արտախորհրդարանական ուժերը պիտի ներգրաւուին, եւ նաեւ զոհուածներու եւ անհետ կորածներու հարազատներու ներկայացուցիչները պիտի ներգրաւուին: Գործող օրէնքով այդպիսի ընթացակարգ՝ ուղղակի յանձնաժողովի կազմ ընդգրկելու, գոյութիւն չունի: «Եւ հիմա դիտարկուած են տարբերակներ, թէ ինչպէս նրանց, նաեւ նրանց համաձայնութեամբ ներգրաւուել, որովհետեւ ձեր նշած այդ հաւասարակշռութիւնը, ըստ էութեան, չի կարող խախտուել, որովհետեւ յանձնաժողովը «Աժ կանոնակարգ» օրէնքի համաձայն է գործում, եւ այնտեղ որոշումները կայացուցին «Աժ կանոնակարգ» օրէնքով: Եթէ հաւասարակշռութեան մասին է խօսքը, այսպէս, թէ այնպէս ի սկզբանէ իշխանութիւնն այնտեղ ունի մեծամասնութիւն», - մանրամասնած է վարչապետը:

Յունուար-Սեպտեմբերին ՀՀ Ելքի Ու Մուտքի Բացասական Ցուցանիշը Կազմած Է 103,571

Այս տարուայ Յունուարէն Սեպտեմբերի ամիսներուն Հայաստան մուտք գործած է 1 միլիոն 112 հազար 206 մարդ, իսկ ելքը կազմած է 1 միլիոն 179 հազար 710: Բացասական հաշուեկշիռը կազմած է -67 504 մարդ: Անոնց կարգին՝ անոնցմէ ՀՀ փաստաթուղթերով ինը ամիսներուն Հայաստան մուտք գործած է 445 316 մարդ, Հայաստանէն մեկնած է 548 887 մարդ: ՀՀ փաստաթուղթերով ելքի ու մուտքի բացասական ցուցանիշը կազմած է -103 571:

Այս տարուայ ինը ամիսներուն Հայաստանին մէջ մահացութեան դէպքերը աճած են, իսկ բնական յաւելումը՝ նուազած է: ՀՀ վիճակագրական կոմիտէի հրատարակած տեղեկատուութեան համաձայն՝ այս տարուայ ինը ամիսներուն ծնունդներու թիւը կազմած է 26 809՝ նախորդ տարուայ նոյն

ժամանակամիջոցի 26 558-ի փոխարէն: Մահերու թիւը կազմած է 23 674՝ նախորդ տարուայ նոյն ժամանակամիջոցի 21 284-ի փոխարէն: Ծնունդները աճած են 0,9, իսկ մահերը՝ 11,2 տոկոսով:

Հայաստանի մշտական բնակչութեան թիւը Հոկտեմբեր 1-ի դրութեամբ կազմած է 2 միլիոն 966.8 հազար մարդ: Քաղաքային բնակչութեան թիւը կազմած է 1 միլիոն 896.1 հազար, գիւղականը՝ 1 միլիոն 070.7 հազար:

Երեւանի մշտական բնակչութեան թիւը կազմած է 1 միլիոն 096.1 հազար: Նշենք, որ տարեկան բնակչութեան թիւը աճած է 3.5 հազարով: Այս տարուայ Յունուար 1-ի դրութեամբ ՀՀ մշտական բնակչութեան թիւը կազմած էր 2 միլիոն 963.3 հազար, իսկ Յուլիսի մէկի դրութեամբ՝ 2 միլիոն 964.6 հազար մարդ:

Հայաստանի Մէջ Կը Նախատեսուի Մինչեւ 2026 Թուականը Նուազագոյն Աշխատավարձը Բարձրացնել Մինչեւ 85 Հազար Դրամ

«Հայաստանում նուազագոյն աշխատավարձը նախատեսուած է բարձրացնել՝ հասցնելով 85 հազար դրամի»: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին ըսաւ ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերու փոխնախարար՝ Ռուբէն Սարգսեան Աժ մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին 2022-ի պետական պիւտձէի նախագիծի քննարկման:

«Մինչեւ 2026 թուականը նախատեսուած է նուազագոյն աշխատավարձը բարձրացնել մինչեւ 85 հազար դրամ», - ըսաւ փոխնախարարը:

Անոր խօսքով՝ 2023-ին առաջին քայլերը կ'առնեն, հիմա քննարկումներու մէջ են ՀՀ ֆինանսներու նախարարութեան գործընկերներու հետ:

Հայաստանի մէջ ներկայիս ամսական նուազագոյն աշխատավարձը 68 հազար դրամ է:

Սակաւաթիւ Մասնակիցներով Կայացաւ Ընդդիմադիր «Հայաստան» Դաշինքի Հանրահաւաքը



Ընդդիմութեան հանրահաւաքի մասնակիցները վերեւ Գկարուած

Նոյեմբեր 8-ին, Ազատութեան հրապարակին վրայ կայացաւ ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի հանրահաւաքը, որուն ներկայ էին նուազ քան 4 հազար հոգիներ:

Հանրահաւաքին «Հայաստան» դաշինքի ղեկավար՝ Ռոպերթ Քոչարեան իշխանութիւնը մեղադրեց բանակցային գործընթացը ձախողելու մէջ: «Առաջին պատերազմի յաղթանակից յետոյ մեր բանակցային դիրքերը խաբսխուած էին մեր յաղթանակների վրայ. դա անվտանգութեան գոտին է Ղարաբաղի շուրջ, 7 շրջանները, Հայաստանի մարտունակ բանակը եւ այն փաստը, որ Հայաստանը Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորն է եղել եւ Հայաստան-Ղարաբաղ ընդհանուր սահմանը՝ Վարդենիսից մինչեւ Արաքս գետ: Եւ դա մեզ ուժ էր տալիս բանակցային ամբողջ գործընթացում: Եւ քայլ առ քայլ արձանագրում էինք դիւանագիտական յաղթանակներ: Հիմա բոլոր այդ առաւելութիւնները չկան», - ըսաւ Քոչարեան:

Քոչարեան անդրադարձաւ

նաեւ ներքաղաքական իրավիճակին, «Քորոնա» ժահրին եւ զնաճին: «Մենք բոլորս պէտք է միաւորուենք: Պէտք է այս դիմադրութեան շարժմանն ուժ հաղորդենք՝ ամէն մէկն իր հնարաւորութիւններով չափով: Սա շատ երկար չի տեւելու, շաբաթների, ամիսների հարց է լինելու: Ամէն ինչ կախուած է ձեզանից, այս հրապարակում կանգնած իւրաքանչիւր ՀՀ քաղաքացուց», - աւելցուց «Հայաստան» դաշինքի ղեկավարը:

Աժ-ի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան անդամ Իշխան Սաղաթէլեան իր ելոյթով նշեց, որ թշնամին կը շարունակէ յաւակնութիւն ունենալ Սիւնիքի նկատմամբ, կը փորձէ հայաթափել Արցախը եւ թրքացնել Հայաստանը: «Ի՞նչ պէտք է անենք մենք, ի՞նչ պէտք է անի հայ ժողովուրդը. պէտք է ձեւաւորենք համազգային դիմադրութիւն: Եկէ՛ք պայմանաւորուենք, այսօր, այստեղից՝ Ազատութեան հրապարակից հիմք ենք դնում համազգային դիմադրութեան», - ըսաւ Իշխան Սաղաթէլեան:

Հայաստանի մէջ Covid-ի Դեմ Պատուաստի Առաջին Դեղաչափը Ստացած Է Չափահաս Բնակչութեան Սօս 30 Տոկոսը

«Հայաստանում Covid-ի դէմ պատուաստանիւթի առաջին դեղաչափը ստացել է չափահաս բնակչութեան մօտ 30 տոկոսը»: Այս մասին յայտնեց խորհրդարանէն ներս յաջորդ տարուայ պիւտձէի նախագիծի քննարկման մասնակցող առողջապահութեան նախարար՝ Անահիտ Աւանէսեան:

Նոյեմբեր 7-ի դրութեամբ կատարուած է մօտ 900 հազար պատուաստում: Առաջին դեղաչափ ստացած քաղաքացիները թիւը աւելի քան 600 հազար է: Երկրորդ դեղաչափ ստացածներունը՝ շուրջ 300 հազար: Առաջին եւ երկրորդ դեղաչափերու միջեւ մեծ տարբերութիւնը պայմանաւորուած է անով, որ պատուաստումներու ընթացքի մեծացումը հիմնականին տեղի ունեցած է վերջին 1 ամսուայ ընթացքին՝ այսինքն կառավարութեան կիրառած խստացումներէն յետոյ: Ներկայիս օրական կը գրանցուի միջինը 18-19 հազար պատուաստման ցուցանիշ:

Աւանէսեան պնդեց, որ յետպատուաստման ընթացքի բարդութեան որեւէ նշանակալի դէպք չէ գրանցուած, միեւնոյն ժամանակ հաստատեց, որ եղած են դէպքեր, երբ

պատուաստուած ըլլալու պարագային ալ մարդիկ մահացած են քովիտէն:

«Երբ որ գրանցուի մահուան դէպք եւ պարզուի, որ այդ անձը պատուաստման վկայագիր ձեռք բերած է առանց պատուաստուելու որեւէ յետադրական միջոց պարզելու՝ արդեօք նա իրականում պատուաստուած էր, թէ ոչ, ցաւօք, չունենք, եւ դա անդրադառնալու է նաեւ պատուաստումների նկատմամբ որոշակի վստահութեան հարց առաջանալուն: Իրաւապահ մարմինները պէտք է խստօրէն շարունակական գաղութնախտման դէպքերը բացայայտելով, ունեցել ենք դէպքեր, որոնք որ պատուաստուած լինելու հանգամանքն անգամ առկայ լինելու պարագայում, ցաւօք քրտի, քովիտից մահացել են: Առաջիկայում այդ տեղեկատուութիւնը եւս կը հրապարակուի», - ընդգծեց Աւանէսեան:

Նախարարը տեղեկացուց նաեւ, որ Հայաստանի դպրոցներուն մէջ կը շարունակուի առկայ ուսուցումը, սակայն այն դպրոցներու, ուր տեղի կ'ունենան տեղական բռնկումներ, կ'անցնին հեռավար ուսուցման:

ԼՈՒՐԵՐ

Փութին - Փաշինեան - Ալիեւ եռակողմ Յանդիպման Շուրջ Ստոյգ Պայմանաւորութիւններ Առայժմ Չկան



Նիկոլ Փաշինեան հանրային հեռուստատեսութեան հետ հարցազրոյցի ընթացքին

Քրեմլինը յայտարարած է, որ Փութին-Փաշինեան-Ալիեւ եռակողմ հանդիպում կը ծրագրուի, սակայն չկայ ստոյգ պայմանաւորութիւն, թէ երբ տեղի պիտի ունենայ երեք առաջնորդներու տեսակապով համագումարը:

«Իսկապէս, մենք հաստատած ենք, որ աշխատանքներ կը տարուին նման հանդիպման նախապատրաստման ուղղութեամբ, սակայն այստեղ կ'ուզեմ նշել, որ մինչ այժմ ստոյգ պայմանաւորութիւններ եւ անոր վերաբերող փոխըմբռնում, թէ երբ կ'ընայ նման տեսակապով համագումար տեղի ունենալ, դեռ չկայ», - լրագրողներուն ըսած է Քրեմլինի խօսնակ՝ Փեսքովը:

Նոյեմբեր 8-ին հակասութիւն առաջացած էր Քրեմլինի խօսնակի եւ Հայաստանի վարչապետի յայտարարութիւններուն մէջ ծրագրողեալ հանդիպման մասին: Նախ օրուայ առաջին կէսին Քրեմլինէն յայտարարեցին, որ այս շաբաթ նախատեսուած է կայացնել եռակողմ հանդիպում, ռուսական պետական հեռուստաընկերութիւնը գրեց, թէ չի բացառուիր հանդիպումը տեղի ունենայ Նոյեմբեր 9-ի փաստաթուղթի ստորագրման տարեկիցին:

Քանի մը ժամ անց հրապարկուեցաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ձայնագրուած հարցազրոյցը Հայաստանի հանրային հեռուստաընկերութեան, ուր ան հակասեց Քրեմլինի յայտարարութեան՝ նշելով, որ Նոյեմբեր 9-ին հանդիպե-

լու որեւէ պայմանաւորութիւն չկայ:

«Բայց շատ կարեւոր է այդ հանդիպումների բովանդակութիւնը, այդ հանդիպումների խորհրդանշութիւնը, այդ յայտարարութիւններից ակնկալուող հնարաւոր արդիւնքը: Այնտեղ, որտեղ մենք կարող ենք արձանագրել արդիւնք, մենք ոչ մի հանդիպումից չենք հրաժարուի, բայց ինքնանպատակ հանդիպումներ անելու կողմնակից չենք նաեւ: Եւ յստակ Նոյեմբերի 9-ի հետ կապուած կարող եմ ասել, որ այս պահին պայմանաւորութիւն այդպիսի չկայ», - ըսաւ Փաշինեան:

Ծաւալուն հարցազրոյցին ան խօսած է նաեւ «3+3» ձեւաչափի մասին՝ պատասխանելով հարցին, թէ ինչու Երեւան առայժմ դիրքորոշում չունի Անգարայի ու Մոսկուայի առաջ մղած համագործակցութեան հարթակի մասին. - «Իրականում երկու օր առաջ մեր կառավարութիւնը արտաքին գործոց նախարարի տեղակալի մակարդակով դիրքորոշում արտայայտել է այդ կապակցութեամբ, եւ մեր դիրքորոշումը հետեւեալն է՝ «3+3» հնարաւոր ձեւաչափը չպիտի իր օրակարգում ունենայ այնպիսի հարցեր, որոնք մենք արդէն համաձայնեցուած քննարկում ենք այլ ձեւաչափերով: Մասնաւորապէս՝ տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացման հարցը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորմանը հարցը»:

Պարուն Կը Դատապարտէ Հայաստանի Պաշտպանութեան Նախարարի Այցը Արցախ

Ատրպէյճանի ռազմական գերատեսչութիւնը Նոյեմբեր 9-ին դատապարտած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի աշխատանքային այցը Արցախ:

Նոյեմբեր 6-ին Արցախի մեկնած Արշակ Կարապետեանը Ստեփանակերտի մէջ մասնակցած էր Արցախի Պաշտպանութեան բանակի ղեկավար կազմի հետ աշխատանքային խորհրդակցութեան, այցելած էր մարտական յենակետեր, հանդիպած մարտական հերթապահութիւն կատարող զինծառայողներուն հետ եւ ծանօթացած դիրքերու ամրաշինական աշխատանքներուն:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը այս առի-

թով տարածած յայտարարութեան մէջ սաղորանք որակած է նախարարի այցը եռակողմ համաձայնագրի տարեկիցի նախօրէին: «Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը, կոպտօրէն խախտելով եռակողմ համաձայնագրի դրոյթները, նպատակ ունի ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանին մէջ եւ ստուերել ռուս խաղաղապահներու գործունէութիւնը», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը Հայաստանի ռազմական ղեկավարութիւնը կը մեղադրէ «44-օրեայ պատերազմին կրած պարտութեանն զասեր չքաղելու մէջ»:

Ռուսաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան Յայտարարութիւնը Կովկասեան Կիճակին Մասին

Ռուսաստանը նպատակ չունի Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ շփման բացառիկ իրաւունք ձեռք բերել: Ինչպէս հաղորդած է ԹԱՄՍ-ը, այս մասին ըսուած է 2020-ի Նոյեմբեր 9-ին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու եռակողմ յայտարարութեան ստորագրման առաջին ամեակի առթիւ ՌԴ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

«Ռուսական կողմը չի յաւակնիր Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ շփման մենաշնորհի, թէպէտ մեզ այդ երկիրներուն եւ ժողովուրդներուն հետ կը կապէ երկար եւ սերտ բարեկամութիւնը, լայնածաւալ գործընկերութիւն բոլոր ազիմոտներով», - նշուած է փաստաթուղթին մէջ:

ԱԳՆ ուշադրութիւն հրաւիրած է այն փաստին վրայ, որ եռակողմ յայտարարութիւնը ընդունելէն մէկ տարի անց կարելի է վստահ հերքել ընկերային ցանցերով եւ համացանցային միջոցներով հաղորդումները այն մասին, որ «Ռուսաստանի խաղաղապահ ջանքերը ուղղուած էին Լեռնային Ղարաբաղը անջատելուն, Ատրպէյճանին յանձնելուն, Հայաստանը «հովանաւորութեամբ» վերածելուն»: «Նմանօրինակ յայտարարութիւնները կը կրեն ժողովրդական բնոյթ, կը կատարեն ակնյայտ արտաքին պատուէր եւ իրականութեան հետ որեւէ աղերս չունին», նշած են ՌԴ ԱԳՆ-էն:

Նախարարութեանն նշած են, որ Մոսկուայի նախաձեռնած բոլոր եռակողմ փաստաթղթերն ու մեքենականութիւնները չեն պարտադրուած կողմերուն, այլ հիմնուած են շահերու ստուգուած հաւասարակշռութեան վրայ, չափազանց յարգալից եղած են Պաքուի եւ Երեւանի ինքնիշխանութեան եւ շահերու նկատմամբ: «Մեր շարք մը նախաձեռնութիւններու շուրջ համաձայնութիւն չէ եղած, եւ այդ նորմալ է: Փոխարէնը, արդէն իսկ

հաստատուած համաձայնութիւնը, ինչպէս կ'ըսեն, ձեռք բերուած է տառապանքով եւ արդիւնաւետօրէն կ'իրագործուի գործնականօրէն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Ընդգծուած է, որ ռուս սահմանապահները ներկայ են սահմանի ամենախնդրալարոյց հատուածներուն՝ կանխելու հակամարտային իրավիճակները եւ կարգաւորելու միջադէպերը: Շուրջօրեայ ռեժիմով կազմակերպուած է Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի սահմանային գերատեսչութիւններու կապերու անձերու աշխատանքը՝ տեղեկատուութեան փոխադարձ փոխանակման նպատակով: Որպէս հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի ընդհանուր իրավիճակի կարգաւորման ուղղուած համատեղ աշխատանքի առանցքային տարրերէն մէկը նշուած է եռակողմ աշխատանքային խումբի (ԵԱՊ) աշխատանքը:

ԱԳՆ նաեւ ընդգծած է, որ Մոսկուայի վճռականօրէն պիտի շարունակէ եռանդուն աշխատանքը՝ ԵԱԿ Միասնի խումբի համանախազահներու (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսա) գծով: «Վստահ ենք, որ այս ընդհանուր ճանաչուած ձեւաչափը դեռ սպառած չէ: Անոր մասին կը վկայէ 2020 թուականի նոյեմբերէն ի վեր Ատրպէյճանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարներու առաջին հանդիպումը՝ ՄԽ համանախազահներու հովանիի ներքոյ՝ Սեպտեմբեր 23-ին Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովի 76-րդ նստաշրջանի ծիրէն ներս: Հանդիպման օրակարգին վրայ մարդասիրական եւ ընկերա-տնտեսական հրատապ հարցերէն: Համանախազահներու ծրագիրներու մէջը կը մտնեն այցելութիւնը տարածաշրջան եւ շփումներու շարունակութիւն «3+2» ձեւաչափով», - ըսուած է յայտարարութեան մէջ:

ԱՄՆ-ի Նախագահը Հայաստանը Հրաւիրած Է

Շարունակուած էջ 1-էն

խարհի եւ այսուհետ չի վարանիր աւելի կոշտ դիրքորոշում բանեցնել մենատիրական երկիրներու, անոնց կարգին՝ Ռուսաստանի ու Չինաստանի հանդէպ: Այս ուղերձը եւ փոխանցած են Ռուսաստանի նախագահին մեր առաջին իսկ հեռախօսազրոյցին», - յայտարարած էր ԱՄՆ-ի նախագահը:

Ժողովրդավարութեան հարցերով ձօ Պայտընի հրաւիրած առաջին համաժողովն է, որ, ըստ պաշտօնական հաղորդագրութեան, տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 9-10-ին: Անոր պիտի մասնակցին մօտ 90 երկիրներու կառավարութիւններու, քաղաքացիական հասարակութեան եւ մասնաւոր հատուածի առաջնորդներ, ինչպէս Սպիտակ տունը նշած է՝ ժողովրդավարութիւնը սպառնացող մարտահրաւիրումներուն համատեղ ուժերով արձագանգելու համար:

Երկօրեայ քննարկումներու օրակարգին վրայ է, մասնաւորապէս, երեք առանցքային հարց՝

ինչպէս դիմակայել մենատիրութիւնը, պաշարիլ բոլորակցիայի դէմ ու առաջ մղել յարգանքը մարդու իրաւունքներու նկատմամբ:

«Այսօր ժողովրդավարութիւնը լուրջ խնդիրներու կը բախի ոչ միայն նորանկախ, այլ նաեւ կայացած երկիրներու մէջ», - յայտարարած է Սպիտակ տունը, փաստելով, որ մարտահրաւիրները ոչ միայն ներքաղաքական են, այլ նաեւ՝ արտաքին: Ներսը կառավարութիւնները չեն յաջողիր արդար ու կայուն տնտեսական միջավայր եւ քաղաքական առաջընթաց ապահովել, որու հետեւանքով ուժ կը հաւաքեն առաջնորդները, որոնք կասկածի տակ կը դնեն ժողովրդավարականները մերն ու հաստատութիւնները: Միւս կողմէ, Սպիտակ տունը կը փաստէ, որ մենատէր առաջնորդները դուրս կ'ելլեն իրենց երկիրներու սահմաններէն՝ խարխելու ժողովրդավարութիւնները այլ երկիրներու մէջ, լրագրողներ եւ իրաւապաշտպաններ թիրախաւորելու եւ ընտրութիւնները միջամտելու միջոցով:

Ռիչըրտ Կիրակոսեան. Մոսկուայի Մէջ Դամաձայնագիրը Կը Ստորագրուի Նաեւ Այն Պատճառով, Որ Ատրպէյճանը Ետ Քայլ Ըրած Է

«Տեսնում ենք, որ Ատրպէյճանը հրաժարուած է Միւնխէնի մարզը եւ հարաւային Հայաստանը հատող միջանցքի պահանջից, փոխարէնը դա կը լինի ճանապարհ եւ երկաթուղային կապ հարաւային Հայաստանում՝ Իրանի հետ սահմանի երկայնքով», «Ազատութիւն»-ի «Կիրակոսեանի վերլուծական Հրատարակման հետ» հաղորդման ժամանակ ըսաւ Տարածաշրջանային հետազոտութիւնների կեդրոնի տնօրէն Ռիչըրտ Կիրակոսեանը, նշելով, որ Նոյեմբեր 9-ին կամ 10-ին Մոսկուայի մէջ համաձայնագիր կը ստորագրուի:



Քաղաքագետ Ռիչըրտ Կիրակոսեան

ճանապարհ եւ երկաթուղային կապ հարաւային Հայաստանում՝ Իրանի հետ սահմանի երկայնքով: Դա խորհրդային ժամանակաշրջանի ենթակառուցուածքների քարտէզների հիման վրայ է լինելու, եւ դրա հետ կապուած եւս մէկ համաձայնագիր՝ սահմանների օրինական սահմանագծման գործընթացի վերաբերեալ, եւ երրորդ տարրը, որը հրապարակայնօրէն չի առնչուած այս ստորագրուելիք համաձայնագրին, կը լինի Ատրպէյճանի համաձայնութիւնը՝ սկսել Ատրպէյճանական գերութեան մէջ պահուող ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց մասնակի վերադարձը», - ըսաւ քաղաքական մեկնաբանը:

Կիրակոսեանի համոզմամբ, այս համաձայնագիրը ամենայն հաւանականութեամբ կը ստորագրուի նաեւ այն պատճառով, որ Ատրպէյճանը ետ քայլ ըրած է, շեշտելով, որ ատրիկա միջանցք չէ, ատրիկա աւելի շատ ճանապարհային եւ երկաթուղագծային կապ է, իսկ Ատրպէյճանը բառերու նշանակութեան հետ կը խաղայ:

«Ատրպէյճանը չետ քայլ է արել: Այլապէս Ատրպէյճանը իր համար վտանգաւոր կերպով բացայայտօրէն պէտք է մարտահրաւէրներ Ռուսաստանին, իսկ ռուսական համբերութեան սահմանը կայ: Եւ մենք տեսնում ենք, որ Ատրպէյճանը հրաժարուած է Միւնխէնի մարզը եւ հարաւային Հայաստանը հատող միջանցքի պահանջից, փոխարէնը դա կը լինի

Ծերակուտական Մեներտեզ Առաջարկած Է Ստուգել Թուրքիայէն Պայրաքտարի Արտածումները

Միացեալ Նահանգներու Ծերակուտականի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Ռոպերթ Մենենտեզ մտադիր է փոփոխութիւններ նախաձեռնել 2022-ի պաշտպանական պիւտճէի նախագիծին մէջ, որոնք կը նախատեսեն թուրքիային անօդաչու թռչող սարքերու արտածման խախտումներու վերաբերեալ ստուգումներ, ինչպէս նաեւ Ատրպէյճանին օգնութեան հնարաւոր սահմանափակումներ: Այս մասին ըսուած է Նիւ Ժըրսիի նահանգի

դեմոկրատ ծերակուտականի տարածած յայտարարութեամբ: Մենենտեզը կը փորձէ հասնել այնտեղ, որ Փենթագոնը հաշուետուութիւններ կ'ապահովէ թէ արդեօք թրքական անօդաչու թռչող սարքերը ունին ամերիկեան արտադրութեան բաղադրիչներ: Բացի այդ, ԱՄՆ-ի իշխանութիւնները պէտք է գնահատեն, թէ Անգարայի կողմէ այդ սարքերու մատակարարումները չեն հակասեր արդեօք ամերիկեան օրէնքները:

Ճանապարհներու Ինքնիշխանութիւնը

Շարունակուած էջ 1-էն
«Ատրպէյճանի կողմից հնչող յայտարարութիւնները, որոնք վերաբերում են միջանցքներին, բացասական են ազդուած մեր աշխատանքի արդիւնաւէտութեան եւ միջնորդարի վրայ, յատկապէս հաշուի առնելով, որ մեր եռակողմ յայտարարութիւններում միջանցքների մասին որեւէ խօսք չկայ», - ընդգծած է Փաշինեան:
Երեւանը յայտարարած է, որ փոխադրային եւ տնտեսական կապերու ապաշրջանակման հարցով պատրաստ է յստակ լուծումներու երթալ, ըստ վարչապետին՝ Հայաստանը պէտք է ստանձնաւորապարհային եւ երկաթուղային հաղորդակցութեան ուղիներ Ատրպէյճանի տարածքով, Ատրպէյճանին

ալ՝ Հայաստանի, ներառեալ՝ Ատրպէյճանը Նախիջևեանի ինքնավար հանրապետութեան կապով:
Հայաստանի վարչապետը նաեւ շեշտած է, որ պէտք է բանակցիլ նաեւ մաքսային, կանաչութեան առողջապահութեան, սահմանային հսկողութեան եւ հսկողութեան այլ հնարաւոր տեսակներու շուրջ:
Ընդգծելով, որ բոլոր տեսակի հսկողական գործառույթները պիտի կատարուին հաւասարութեան հիմքով՝ Օվերշուքը աւելցուցած է, որ եռակողմ աշխատանքային խումբին մէջ արդէն քննարկած են, թէ ինչպէս եւ ինչէն պէտք է սկսել ճանապարհային ենթակառուցուածքներու ապաշրջանակումը: Ժամկէտներու մասին, սակայն, ո՛չ Փաշինեանը եւ ո՛չ ալ Օվերշուքը խօսած են:

Յայտարարութիւններ՝ Նոյեմբեր 9-ի Առթիւ

44-օրեայ պատերազմի աւարտի՝ Նոյեմբեր 9-ի առթիւ տարբեր պետութիւններ եւ միջազգային կառույցներ հանդէս եկան յայտարարութիւններով:

Հայաստանի ԱԳՆ. Հակամարտութեան Լուծումը Կ'ենթադրուի Արցախի Կարգավիճակի Յստակացում

Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան ստորագրման տարելիցին առթիւ Հայաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարած է, որ հակամարտութեան լուծումը կ'ենթադրէ Արցախի կարգավիճակի յստակացում եւ տեղահանուած արցախահայութեան՝ Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքին իրենց բնակավայրեր անվտանգ վերադարձի ապահովում:

Ընդ որում՝ Հայաստանի արտաքին գերատեսչութիւնը շեշտած է, որ բանակցութիւններ հնարաւոր են միայն ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան մասնաթի ներքոյ:

Հայաստանը վերահաստատած է պատրաստակամութիւնը գործնական ջանքեր գործադրելու տարածաշրջանի կայունութեան եւ խաղաղ գարգացման դարաշրջանի բացման ուղղութեամբ՝ միեւնոյն ժամանակ անհրաժեշտ համարելով, որ Ատրպէյճանը եւս կառուցողական դիրքորոշում որդեգրէ՝ հրաժարելով յարձակողական հոետորաբանութեանն ու գործողութիւններէն:

Լեռնային Ղարաբաղի Արտաքին գերատեսչութիւնը Նոյեմբեր 9-ի առաջին ամեակի յայտարարութեան մէջ իր հերթին ընդգծած է, որ Արցախը երբեք պիտի չըլլայ Ատրպէյճանի կազմէն ներս: Խաղաղութեան հաստատման անկիւնաքարը, ըստ Ստեփանակերտին, Արցախի ժողովուրդի արդէն իրացրած ինքնորոշման իրաւունքի ճանաչումն է եւ այն տարածքներու ապաբռնագրաւում, ուր արցախահայութիւնը ինքնորոշուած է:

Ռուսաստանը Կարելորած Է Սահմանից Լարուածութեան Նուազեցումը Եւ սահմանագատման Մեկնարկը

Եռակողմ յայտարարութեան միջնորդ Ռուսաստանը փաստաթուղթի ստորագրութեան մէկ տարի անց կարելորած է ատրպէյճանահայկական սահմանի լարուածութեան նուազեցումը եւ սահմանագատման, ապա գծման շուտափոյթ մեկնարկը: Մոսկուան պատրաստակամութիւն ցուցաբերած է անհրաժեշտ խորհրդատուական աջակցութեան: Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը կարելորած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու ջանքերը առաջին հերթին տարածաշրջանի ընկերա-տնտեսական եւ մարդասիրական խնդիրներու լուծման շրջաժիրէն ներս:

Ռուսական Արտաքին գերատեսչութիւնը բարձր գնահատած է ապաշրջանակման հարցով փոխվարչապետներու եռակողմ աշխատանքային խումբի գործունէութիւնն ու անհրաժեշտ համարած շահերու հաւասարակշռութեան վրայ հիմնուած յստակ նախագիծերու շուտափոյթ գործարկումը, «որ կը նպաստէ Հարաւային Կովկասի տնտեսական եւ փոխադրային ներուժի զբաւորման»:

Ի դէպ, Մոսկուան Նոյեմբեր 9-ին յայտնած է, որ այս պահու դրութեամբ որեւէ փոխմբռնում չկայ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի ղեկավարներու եռակողմ հանդիպման ժամկէտներու հարցով, թէեւ աւելի վաղ, Քրեմլինը այս շաբթուայ սկիզբը Ալիեւ-Փաշինեան-Փութին եռակողմ տեսակապով համաժողովի հնարաւորութեան մասին կը յայտնէր:

Միացեալ Նահանգներ Կոչ Կ'ընէ Աշխուժացնելու ԼՂ Խնդիրի Համապարփակ Կարգաւորման Ձանքերը,

Միացեալ Նահանգները կոչ կ'ընէ աշխուժացնելու ԼՂ խնդրի համապարփակ կարգաւորման ջանքերը, ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու հովանիի ներքոյ:

Պաշտօնական Ուաշինկթընը յորդորած է Պաքուն եւ Երեւանը շարունակել եւ աշխուժացնել իրենց ներգրաւուածութիւնը, անոնց կարգին՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու հովանիի ներքոյ, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան առնչուող կամ անոր հետեւանք բոլոր չլուծուած խնդիրներուն համապարփակ լուծումներ գտնելու համար: Այս մասին ըսուած է Ատրպէյճանի, Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարներու կողմէ Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողութիւններու ամբողջական դադրեցման վերաբերեալ եռակողմ յայտարարութեան ստորագրման առաջին տարուայ կապակցութեամբ Միացեալ Նահանգներու Պետական քարտուղարութեան խօսնակ՝ Նէտ Փրայսի յայտարարութեամբ:

«Այս շաբաթ Միացեալ Նահանգները եւ միջազգային հանրութիւնը նշած են Հարաւային Կովկասի հայկական եւ ատրպէյճանական ուժերու միջեւ 44-օրեայ բռնու մարտերուն վերջ դրած հրադադարի յայտարարութեան առաջին տարին: Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք անցեալ տարուայ մարտական գործողութիւններու ընթացքին զոհուածներու եւ վիրաւորուածներու ընտանիքներուն», - յայտարարած է Պետական քարտուղարութիւնը:

«Կոչ կ'ընենք նաեւ հետաքննութիւն իրականացնել մարդու իրաւունքներու ոտնահարումներու եւ միջազգային իրաւունքի խախտումներու վերաբերեալ պնդումներու հետ կապուած», - ըսուած է Նէտ Փրայսի յայտարարութեամբ:

Պետական քարտուղարութիւնը հաւաստեցած է, որ Միացեալ Նահանգները յանձնառու կը մնայ Հարաւային Կովկասի անվտանգ, կայուն, բարգաւաճ եւ խաղաղ ապագայի ապահովման:

Նէտ Փրայսը նշած է նաեւ, որ ներկայիս տարածաշրջան է ԱՄՆ-ի պետական քարտուղարի փոխտեղակալ՝ Էրիքա Օլսընը՝ բոլոր երեք երկիրներու հետ երկկողմանի հարցեր քննարկելու եւ տարածաշրջանային համագործակցութեան հնարաւորութիւնները ուսումնասիրելու նպատակով:

Անցած է ԽՆԱՄԻԱԿԱՆ Բարեկամութեան Շրջանը

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ատրպէյճանի մէջ ելոյթ ունենալով գգուշացուց ճղճիմ հաշիւներ հետապնդելով եւ ներքին քաղաքականութեան սիրոյն մեծ հնարաւորութիւնները անտեսելու հաւանական վնասներուն: Այս տրամաբանական հաստատումը իր բոլոր իմաստը կը կորսնցնէ, երբ կ'արտասանուի էրտողանի կողմէ:

Բոլորս գիտենք որ էրտողանի վարչութեան շրջանին Թուրքիոյ մէջ ի հիմանէ ոչնչացուած է դիւանագիտական բոլոր սկզբունքները եւ աւանդութիւնները: Յիշենք որ էրտողան գիտակցաբար եւ մեծ ոգեւորութեամբ կործանեց այդ համակարգը: Արտաքին Գործոց Նախարարութեան կազմին մէջ փորձառութիւն եւ աւանդութիւն ունեցող բոլոր դեսպանները եւ բարձրաստիճան պաշտօնեաները արհամարհեց «մոնչերներ» կոչելով:

Ի տարբերութիւն իր նախկիններէ էրտողան կ'ուզէր անձամբ հսկել բոլոր գործընթացները: Ունէր մեծ ինքնավստահութիւն, որուն ապակիներով կ'ընդհատէր նաեւ թարգմանները եւ «վան Միլուլթ, վան միլուլթ» ըսելով առանց նկատելու խօսակիցներուն զարմանքը կը պարտադրէր իր զգացական պոռթկումը: Որքան ատեն որ համաշխարհային շուկայի դերակատարները յոյսեր կը դնէին իր վրայ, այդ անբարեկիրթ վարքն ալ կ'ընդունուէր որպէս հեղինակութիւն ունեցող քաղաքական գործիչի մը կամքը: Էրտողան փոխանակ քննադատուելու հերոսի մը կը վերածուէր համաշխարհային գետնի վրայ:

Այսօր կրնանք հաստատել թէ շատ ջուրեր հոսած են այդ կամուրջներու տակէն եւ նոյն վարքը շատ հեռու է անցեալին գոյացուցած սպաւորութիւններէն: Համաշխարհային գետնի վրայ էրտողան ոչ թէ հեղինակութիւն, այլ անկանխատեսելի քաղաքական գործիչի մը վերածուած է:

Այս պահուն աշխարհասփիւռ հայութեան համար ուշադրութեամբ հետեւելի եւ գգուշութեամբ ընկալելի յատկութիւն մը կը ներկայացնեն էրտողանի Հայաստանի մասին ըսածները:

Բոլորիս ծանօթ է որ Հայաստան դուրս գալ կ'ուզէ իր առջեւ ցցուած շրջափակումներէն:

Այս սիւնակի վրայ բազմիցս գրած ենք թէ առկա շրջափակումները Թուրքիոյ քաղաքական գործիչներու միակողմանի որոշումով գործադրուած են: Այսօր էրտողան կ'ըսէ թէ միջավայրը նպաստաւոր է յարատեւ խաղաղութեան հասնելու համար, բայց կը շարունակէ թշնամութիւն անել Հայաստանի դէմ: Ընդմիջող կը ներկայացնէ նոր նախապայմաններ իր երկրի պատճառած քաղաքական ու դիւանագիտական ճգնաժամէն դուրս գալու համար:

Պարտինք նշել որ այս պայմաններու մէջ մենք դրական ոչ մէկ զարգացում կը տեսնենք որքան ատեն որ էրտողան կը փորձէ բնականոն յարաբերութիւններ մշակելու փոխարէն նոր ձեռքբերումներու սակարկութեան ճամբայ կը բանայ: Պէտք է լուրջ ու գիտակից ըլլալ այս տեսակի ծուղակներու դիմաց, քանի որ Թուրքիոյ իշխանութիւնները իրենց պահանջներով կը սպառնան Հայաստանի



ցարդ ամենակարեւոր հարեւան երկրի, Պարսկաստանի հետ սահմանային կապերը խզելու:

Հարիւր տարուայ ընթացքին բազում փորձերով տեսանք թէ ապարդիւն է որեւէ երկրի բարեկամութեան ապաւինիլ: Երկիրները իրենց յարաբերութիւնները կը ձեւաւորեն փոխադարձ շահաւետութեան հիմքերու վրայ, այլ ոչ թէ զգացարան բարեկամութիւններու: Այդ անցեալին էր որ թագաւորներ իրարու ինամի դառնալով կը կերտէին միջպետական բարեկամութիւններ: Այսօր այդ բարեկամութիւնները խիստ դիւրաբեկ են եւ կրնան շարունակուիլ միայն փոխադարձ շահաւետութեան պայմաններով: Ուրեմն կրկնենք մեր սիրած կանխախօսը՝ «Զգուշացէք դուները փակուած են»:

Պարուի Սանճահարու՞մ, Թե՞ Եռակողմ Գործարք

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Իրանն ու Ատրպէյճանը պայմանաւորուել են համատեղ յանձնախումբ ստեղծելու մասին, որն ըստ իրանի արտաքին գործերի նախարարի՝ կ'օգնի աւելի լաւ կառավարել հասարակական կարծիքն ու լրատուամիջոցները: Նա յայտարարել է, որ Ատրպէյճանին համարում են ազգականներ եւ կարեւոր են դիտարկում ազգակցական յարաբերութիւնը կառավարելը: Ըստ Հոդէյն Աբլոզահիանի, կարող են լինել տարաձայնութիւններ, սակայն կարեւոր է դրանք յաղթահարելու քաղաքական կամքի առկայութիւնը: Իրանի արտաքին գործերի նախարարի յայտարարութիւնը բաւականին բազմիմաստ է: Խօսելով հարեւան Ատրպէյճանին ազգականներ համարելու մասին, նա թերեւս ակնարկում է որոշակի կրօնական համատեքստ, մասնաւորապէս Ատրպէյճանի բնակչութեան շիա լինելու հանգամանքը, ինչպէս իրանը: Այդ ակնարկը թերեւս ուղղուած է ոչ միայն Ատրպէյճանի, այլեւս Թուրքիայի դեկավարութեանը՝ սուննիական Թուրքիայի, որը իր գերակայութիւնն է հաստատում շիա Ատրպէյճանի վրայ: Միաժամանակ սակայն, իրանի նախարարի այդ սկ-

նարկը կարող է լինել ոչ միայն դիմադրութեան ուղերձ, այլ լինել նաեւ գործակցութեան առաջարկ, այդ թւում Թուրքիային: Առաջարկ այն իմաստով, որ իրանը կ'օգնի սիւննի Թուրքիային առաւել լաւ կառավարել շիա Ատրպէյճանում տրամադրութիւնները, եթէ այդ գործում Թուրքիան հաշուի առնի նաեւ իրանի շահերն ու հետաքրքրութիւնները, իհարկէ ոչ միայն Ատրպէյճանի, այլ աւելի լայն իմաստով՝ այդ թւում Կովկասից դուրս ռեգիոններում:

Ատրպէյճանի եւ իրանի միջեւ համատեղ յանձնախումբի ձեւաւորման պայմանաւորութիւնները թերեւս վկայում է, որ խորքում կայ ընդհանուր որոշակի եռակողմ փոխըմբռնում: Հնարաւոր է դա համարել իրանի ձեռքբերում, եթէ հաշուի առնենք վերջին շաբաթների ատրպէյճանա-իրանեան լարուածութիւնը: Ուշադրութեան է արժանի թերեւս այն, որ իրանա-ատրպէյճանական համատեղ պայմանաւորութեան մասին յայտնի է դառնում իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցութեան վերսկսման հեռանկարի որոշակիացմանը զուգահեռ: Յայտարար-

Շար.ը էջ 15

ՇՆՄԱՆՆԵՐ

Նախաձեռնութեամբ՝

ՄԱՍՄԻՆԱ

Տօթ. Արշակ Գազանճեան

ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

Ազգային Մտորումներ ու Կեցուածքներ

Գիրքը կը ներկայացնէ՝

Իրաւաբան Ռուբէն Աւշարեան

«Տօթ. Արշակ Գազանճեան այն հազուագիտ ազգային-հասարակական գործիչներէն է որ տասնամեակներու վրայ երկարող իր քաղաքական եւ գաղափարական աշխատանքները միշտ բնորոշուած են հաւասարակշուած կեցուածքներով եւ լուրջ ու չափաւոր արտայայտութիւններով:»

Հինգշաբթի, Նոյեմբեր 18, 2021

Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ Կեդրոն

1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104

Հայ-Ամերիկեան Թանգարանի Աշնանային Ընդունելութիւնը



Կրեմլի մէջ կառուցուելիք Հայ Ամերիկեան Թանգարանի եւ մշակութի կեդրոնի հոգաբարձուներու եւ տնօրէններու խորհուրդի նախաձեռնութեամբ, Շաբաթ Նոյեմբերի 6-ին, 2021, առաւօտեան ժամ 10:30-12:30, կազմակերպուած էր զեղեցիկ նախաճաշ-հաւաք մը (Brunch), որ տեղի ունեցաւ Տէր եւ Տիկ. Դաւիթ եւ Մարգարիտ Մկրտչեաններու տեսարժան պարտէզին մէջ, Փաստինա:

Ընկերային բնոյթ կրող սոյն միջոցառումին նպատակն էր թանգարանի շինութեան մեծ ծրագրին հետ առնչուող մարմիններու եւ ենթակառուցներու հետ գործող անհատներու փոխադարձ ծանօթացումը, ընկերային հաճելի մթնոլորտի մը ներքեւ:

Շուրջ 50 հրաւիրեալներու մէջ կը գտնուէին Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Թորգոմ Եպս. Տոնոյեան, Վեր. Հենրիկ Շահնազարեան, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութեանց ղեկավարներ, ճարտարագէտներ եւ այլ անձնաւորութիւններ:

Հոգեւոր առաջնորդներու հաւաքական աղօթքէն ետք՝ օրուան հանդիսավար, հոգաբարձուներու խորհուրդի գործադիր ատենապետ՝ Պերմ Կարապետեան, ողջոյնի ջերմ խօսքերով հանդէս գալով բարձր գնահատեց ներկաներուն

կարեւոր ներդրումը հայ ամերիկեան թանգարանի եւ մշակութային կեդրոնի մեծ ծրագրի իրագործման մէջ, որուն սկզբնական քայլերն ընթացքի մէջ են: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց օրուան հիւրընկալ Տէր եւ Տիկ. Դաւիթ եւ Մարգարիտ Մկրտչեաններուն:

Այս առթիւ սրտի խօսքերով եւ թանգարանի մեծ տեսիլքի բարեյաջող իրականացման սրտագին ու ջերմ բարեմաղթութիւններով հանդէս եկան Գերշ. Տ. Յովնան եւ Գերշ. Տ. Թորգոմ սրբազանները, Վեր. Հենրիկ Շահնազարեանը, ինչպէս նաեւ Թալին Եագուպեան, Տոքթ. Նազարէթ Տարագճեան, Գաբրիէլ Մոլոյեան, Գեւին Գեւորեան, Լեւոն Փիլեան եւ տասնեակ մը այլ անձնաւորութիւններ: Գործադիր տնօրէն Շանթ Սահակեան իր ելոյթին մէջ, հակիրճ բացատրութիւններ տուաւ արդէն սկսուած շինարարական աշխատանքներու գործընթացի մասին: Խանդավառ մթնոլորտին մէջ ներկաներու կողմէ տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ:

Օրուան հիւրընկալ Դաւիթ Մկրտչեան շնորհակալութիւն յայտնեց Հայ Ամերիկեան Թանգարանի հոգաբարձական խորհուրդին եւ ներկաներուն, իրենց ներդրումին եւ մեծ աջակցութեան համար, յաջողութիւն մաղթելով սոյն ազգոգուս նախաձեռնութեան

Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» Արեւմտահայերէնի Գործարգմանու շնորհահանդէսը

Չորեքշաբթի, Դեկտեմբեր 15, 2021ի երեկոյեան ժամը 7ին, Արեւմտեան Թեմի Արմէն Համբարդաճիւնի մէջ, տեղի պիտի ունենայ շուրջ տասնմէկ դարեր առաջ ապրած Սուրբ Գրիգոր Նարեկացիի Վարդապետին «Մատեան Ողբերգութեան» Արեւմտահայերէնի նոր թարգմանութեան շնորհահանդէսը: Հատորը հրատարակուեցաւ վերջերս:

Թարգմանական այս նոր իրագործումը իրականացած է Հոգւհ. Տաճատ Մայր. Վարդապետ Եարտրեանին անխոնջ աշխատանքով: Անշուշտ, հրապարակի վրայ գոյութիւն ունին Աշխարհաբարքանի մը թարգմանութիւններ, սակայն այս նոր թարգմանութիւնը, որ պատրաստուած է անցնող տասնամեակներու ընթացքին, ունի բանաստեղծական նոր ոճ, նոր շունչ, նոր թարմութիւն եւ աւելի դիւրահասկնալի մերձեցում՝ մարդոց ներաշխարհէն ներս թափանցելու եւ ներգործելու համար: Այս իմաստով, համաձայն Հայր Սուրբին, միշտ կարիքը կը գզացուի նոր եւ շարունակական թարգմանութեանը: Արեւմտեան Թեմի Սրբազան



Վերա Սահակեան.- Մեծ մասը բարբառախառն հայերէն լեզուով շարագրուած են: Կան նաեւ ճոխ ու դասական, գեղեցիկ շարադրանքներ: Ինչպէս ալ ըլլայ շարադրանքը նամակներու բնոյթն ու բովանդակութիւնը նոյնն են: Նեղ միջամտութիւններ առած ենք՝ պահպանելով արխիւային նիւթերու բնագրերու հրատարակման չափանիշները:


Խաչիկ Ճանոյեան.- Դոկտեմբերի 29-ին կը լրանայ Յայոց Յայրիկի վախճանման 114-րդ տարին: Ծնորհակալութիւն յայտնելով Տիկին Սահակեանին՝ մեզ հետ ունեցած հարցազրոյցի համար: Մաշտոցի անուան Մատենադարանի պաշտօնական էջի մէջ բաց տեղադրուած է գիրքի թուային տարբերակը, որպէսզի ցեղասպանութիւնը վերապրող սերունդները, կարողանան գտնել իրենց հարազատները: Այդուհանդերձ, մեր հարցազրոյցին իրեն ամփոփում կուզենք գետնից Յայոց հայրիկին ուղղուած նամակի մէկ նմոյշ՝ յոյս փայտալայելով.



Խաչիկ Ճանոյեան - Կ'ուզեմ նախ շնորհակարել Ձեզ, որ առնուազն 120 տարի յետոյ լոյս աշխարհ բերած էք այնպիսի աշխատութիւն մը, որ բացառիկ արժեք կը ներկայացնէ ոչ միայն պատմա-բանասիրական բնագաւառէն ներս, այլ նաեւ առարկայապէս շօշափելի կը դարձնէ Խրիմեան Կաթողիկոսի «Յայոց Յայրիկ» պատուանունը: Ինչպէ՞ս յղացաւ այս հատորի հրատարակման գաղափարը:

Վերա Սահակեան - Խորապէս շնորհակալ եմ հարցազրոյցի եւ լուսաբանման համար: Տարիներ առաջ ինձ յանձնարարուած էր ուսումնասիրել Համիտեան կոտորածներու, Հայոց ցեղասպանութեան, Հայոց մեծ եղեռնի վերաբերեալ Մաշտոցի անուան հին ձեռագրերու գիտահետազոտական կաճառ՝ Մատենադարանի մէջ պահուած ձեռագրերու ժառանգութեան ուսումնասիրութիւնը: Հետագոտական այս աշխատանքը հիմնականին մէջ կը կեդրոնանար արխիւային նիւթերու քննութեան վրայ: Աշխատանքի ընթացքին ես յայտնաբերեցի մի շարք կարեւոր վաւերագրեր եւ վկայութիւններ, որոնցմէ յատկապէս կ'ուզեմ այստեղ առանձնացնել օսմաներէն պաշտօնական վաւերագրերի ամփոփագրերը, որոնք յոյժ կարեւոր ըլլալով, դեռեւս անցեալ դարու կէսերուն փնտռուած էին վախճանեալ Գրիգոր վրդ. Կերկերեանի կողմէ: Կերկերեան (Գրիկէյր) նոյնիսկ յանձնարարած էր լուսահոգի պատմաբան Վահագն Տատրեանին, որպէսզի ինք Հայաստան եղած շրջանին փնտռէր այս վաւերագրերը: Ի թիւս այլ կարեւոր վկայութիւններու: Երկար տարիներ փնտռուած այս օսմաներէն վաւերագրերը, ինչպէս նաեւ այլ վկայութիւններ եւս, Մատենադարանի արխիւին մէջ յաջողեցայ գտնել:

Եթէ Մեծ եղեռնի առնչութեամբ յատկապէս հարուստ են անհատական անձանց արխիւները, ապա լեւի-լեցուն են Համիտեան կոտորածների վկայութիւններով, յատկապէս Հայոց 125-րդ Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեան վանեցիի արխիւը: Որովհետեւ իր կաթողիկոսութեան շրջանին տեղի ունեցած էին կոտորածները: Մատենադարանի մէջ պահուող այս արխիւը բացառապէս հայ գաղթականութեան կողմէ գրուած նամակներ են, որոնք, իբրեւ փոքրագոյն պատմութիւններ մանրամասն եւ տեսանելիօրէն կը նկարագրեն Համիտեան կոտորածներու նպատակի ողջ ընթացքը, ծրագրուած ձեւը, փութերը, միջոցները եւ կատարելաբանութիւնը:



Խաչիկ Ճանոյեան - Կարո՞ղ էք այս նամակներու մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ փոխանցել:

Վերա Սահակեան - Ըստ էութեան հայրենի կառավարութիւն չունեցող, լլկուած, սովահար, բռնութեան ենթարկուած, հողագրկուած, որդեգրկուած, բանտարկուած, բռնի իսլամացած, առեւանգուած անչափահասու մօր կամ հօրեղբօր, այլ կերպ, մէկ այլ խօսքով՝ լլկուած հայութեան կողմէ գրուած նամակներ են՝ վերջը շարագրուած խնդիրների լուծման հաւատքով: Այս նամակները քայլ առ քայլ կը պատկերացնեն ցեղասպանական ընթացքը եւ անոր մանրամասնութիւնները: Նամակներ, որոնցմով հայութեան մեծագոյն հատուած մը կաթողիկոսը կ'ընդունէին որպէս փրկիչ, պաշտպան, Աստուծոյ երկրային փոխանորդը: Ինչպէս նամակագիրներն գրած են յաճախ՝ «Վերեւն Աստուած եւ ներքեւն Քեզ ենք ապաւինում»:

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 30-ամեակ

ՄԻՔԱՅԷԼ ԵՌԻՍՈՒՖԵԱՆ Անկախութեան օր:

Երազի մը իրականացումը: Առաջինը՝ գրեթէ մէկ դար առաջ, որ սակայն հազիւ երկու տարեկան, իր մահկանացուն կնքեց, որպէսզի ծնունդ առնէ երկրորդը որ մեզ Ռուսական հօր կայսրութեան գիրկը նետեց եւ 70 տարիներ թէ՛ բարիք եւ թէ՛ չարիք բերաւ մեր ժողովուրդին:

Բարիք՝ որովհետեւ մեզ ազատեց թուրքի սպառնալիքներէն եւ զարգացուց մեր մշակոյթը, տնտեսութիւնը, Երեւան քաղաք կառուցանեց, իր Մատենադարանով, համալսարաններով, Միժեռնակաբերդով եւ ինքնորոյն ճարտարապետութեամբ:

Եւ չարիք՝ որ կաշկանդեց մեր խօսքի ազատութիւնը, քանի՛ քանիներ Սիպերիոյ սառնամանիքին զոհ տուաւ, հազարաւոր երիտասարդներ պատերազմի դաշտ տարաւ եւ աւելին՝ սերունդներու հոգիներուն մէջի հաւատքի ջահը մարեց:

Եւ ահա երրորդը: Ո՞վ կրնար նախագուշակել որ Սովետական հսկան կրնար տապալիլ եւ 15 հանրապետութիւններ կրնային ազատ շնչել, իրենց ինքնուրոյն Սահմանադրութիւնը ունենալ, դրօշակ ու ներկայացուցիչ՝ ազգերու ընտանիքին մէջ:

Ինչպէ՞ս պատահեցաւ այս հրաշքը:

Հրաշք կը կոչենք այս եղածը, որովհետեւ միայն գերագոյն ոյժ մը կրնար այդ կատարել, այսինքն Աստուած, որուն այսօր մեր շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել:

Այո՛, Աստուած կատարեց Անկախութեան հրաշքը:

Ո՛չ մեր քաղաքագէտները, որոնք Խորհրդային Միութեան պաշտօնեաներն էին մեծմասնութեամբ,

Ո՛չ մեր բանակը ու զինամթերքը, որովհետեւ ո՛չ բանակ եւ ոչ ալ զինամթերք ունէինք 30 տարիներ առաջ,

Ո՛չ մեր աշխարհագրական դիրքը, որ ամենէն աննպաստն է տակաւին բոլոր տարածաշրջանին մէջ,

Ո՛չ ալ մեր մշակոյթի սպասարկուները՝ որոնք օտարին նուագածուններն էին երկար տարիներ:

Աստուած տուաւ մեզի մեր անկախութիւնը, առանց որ կաթիլ մը արիւն թափենք եւ օտարներու գուլթը մոռնանք:

Եւ այսօր, երբ հպարտութեամբ կը դիտենք Հանրապետութեան Հրապարակին վրայ տողանցող մեր բանակը, ցուցահանդէսի դրուած մեր զինամթերքը, քանի՞ ձայնով կը խոնարհինք Երկնաւորին առջեւ եւ փառք կուտանք իրեն:

Փառք՝ ո՛չ թէ նախագահին, Փառք՝ ո՛չ բանակին, Փառք՝ ո՛չ թէ հոգատար Ռուսաստանին, այլ՝

Փառք Աստուծոյ:

Եւ Աստուած մեզ հաշուի կը կանչէ իր տուած նուէրին գործածութեան նկատմամբ:

Աստուածաշունչին մէջ գեղեցիկ առակ մը կայ, Յիսուսի կողմէ արտասանուած, երբ հարուստ մարդ մը իր ծառաները կը կանչէ եւ անոնց գումարներ կուտայ շահագործելու համար: Անոր որ 5 կուտայ, յաւելեալ 5-ով մը իր տիրոջ կը ներկայանայ, անոր որ 2, 2 ալ կը շահի, իսկ մէկ ստացողը իր ստացածը չի շահագործեր, այլ

եղածին պէս իր տիրոջ կը վերադարձնէ: Տէրը կը վարձատրէ առաջին երկուքը, իսկ կը պատժէ երրորդը:

Աստուած մեզի անկախութիւն տուաւ, որպէսզի անոր բարիքները վայելենք:

Կը ցաւինք ըսելու, որ Հայաստանի բնակչութեան միայն 10 առ հարիւրը անկախութեան բարիքները կը վայելէ:

Մնացածը աղքատութեան եւ անօթութեան զոհերն են, որոնց մեծ մասը աշխատանքի համար իրենց ընտանիքները ձգած օտար երկիրներ կը չուեն, կ'ինքն իրենց մարմինները օտարներու կը ծախեն հաց մը ուտելու համար:

Անկախութեան օրը՝ երբ բեմին վրայ պետական աւագանին կը դիտենք, մեր միտքը կ'երթայ բոլոր անոնց՝ որոնք յուսալքուած են եւ արտասահմանի իրենց ազգականներու նպաստին կը սպասեն:

Մենք ազգական չունինք Հայաստանի մէջ, սակայն ամէն ամիս դրամատուն կ'երթանք՝ գումար մը փոխանցելու մեր «ազգականներուն», բոլոր անոնց՝ որոնք հացի պայքարը կը մղեն՝ առանց իրենց անօթութիւնը յազգեցնելու:

Հայաստանի ամենէն մեծ մղձավանջը սակայն՝ արտագաղթն է:

Հայաստանը իր բնակիչներէն պարպելու ահաւոր տագնապը, որ մեր թշնամիներուն տարիներու երազն է, առանց որ այդ մէկը գլուխ հանելու համար քուն փախցնեն:

Արտագաղթի համաճարակը Հայաստանը կը պարպէ իր գիտնականներէն, մտաւորականներէն եւ բանուոր դասակարգէն:

Հայաստանի ժողովուրդը կը խորհի թէ անկախութիւնը իրեն չարիք բերաւ քան թէ բարիք:

Մէկ բարիք որ մեզ երջանկացուց անկախութեան առաջին տարիներուն՝ հայ ժողովուրդի սովամահ հոգին կշտանային էր հոգեւոր սնունդով, երբ հազարաւոր Աստուածաշունչներ ընտանիքներէն ներս մուտք գործեցին եւ հաւատքի պլպլացող ջահը անգամ մըն ալ Քրիստոսի լոյսով բոցավառեցաւ:

Մտահոգութիւն է անշուշտ աղանդներու արշաւը դէպի անօթի հոգիները եւ սակայն ժամանակի ընթացքին կը հաւատանք որ ճշմարտութիւնը պիտի տիրապետէ եւ Հայաստանի ժողովուրդը պիտի վերագտնէ իր հայրերուն անարատ հաւատքը, ո՛չ թէ մակերեսային հաւատքը, այլ հոգիներ ապրեցնող եւ Աստուծոյ միացնող հաւատքը:

Անկախութեան երազի իրականացումը մեզ կը մղէ սպասելու ուրիշ երազի մը իրականացման:

Ունենալ անշահախնդիր դեկավարներ, որոնք իրենց ժողովուրդին բարօրութիւնը եւ երջանկութիւնը հետապնդեն, արդարութիւն եւ ապահովութիւն տիրէ երկրին մէջ, որպէսզի աշխարհացրիւ հայր բեկորները տուն վերադառնան, իրենց պապենական հողերը մշակելու, հայրենիքը գիտութեան եւ մշակոյթի կեդրոնի մը վերածելու, եւ աշխարհի ցոյց տալու զԱստուած պաշտող եւ Անոր վստահողներու փայլուն ապագան:

Որպէս գիտակից հաւատացեալ, եւ որպէս մէկը որ մտահոգ է իր ազգին առողջութեամբ, պարտական կը զգանք համեստօրէն յայտարարելու որ՝ հայ ժողովուրդը, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին հոգեւոր վերազարթնումի

մը պէտք ունի: Անկախութեան օրուան մէջ Հրապարակին վրայ ծածանող դրօշները, շքանշանակիր զինուորականները, հրասայլերն ու հրթիռները մեզ այնչափ չեն խանդավառեր որչափ որ կը մտահոգէ մեզ մեր ժողովուրդին Աստուծոյ հետ ապրող վիճակը:

Երբ կը գողնանք, կը ստենք, կաշառք կը ստանանք, արդարութիւնը կ'ոտնակոխենք, կարօտեալին եւ վշտացեալին կունակ կը դարձնենք, մեր հաւատքը միայն տօնական օրերուն վերապահած ենք, անձնասէր, հաճոյամոլ, ամբարտաւան կեանք կ'ապրինք, երբ մեր նոր սերունդը օտարին երգը, պարը կը կապէ, գիշերային վայելքներով կը գինովնայ, բանտերու խցիկները կը խճողէ, երբ մեր դպրոցներու քրիստոնէական դաստիարակութիւնը մակերեսային է եւ անգործնական, ինչպէ՞ս ակնկալենք որ Աստուած օրհնէ մեր երկիրը, եւ մեր ժողովուրդին երջանկութիւն պարգեւէ:

Աստուածաշունչին մէջ սքանչելի հատուած մը կայ, որ ահագանգ է մեր վիրաւոր ժողովուրդին համար:

«Իմ անունովս կոչուած ժողովուրդս եթէ խոնարհին ու աղօթք ընեն, ու իմ երեսս խնդրեն եւ իրենց չար ճամբաներէն դառնան, եւ ալ երկիրքէն պիտի լսեմ, ու անոնց մեղքը ներեմ, ու անոնց երկիրը բժշկեմ» (Բ Մնաց, 7:13,14): Անուրանալի ճշմարտութիւն է որ հայ ժողովուրդը Քրիստոսի անունը կը կրէ 1700 տարիներէ ի վեր:

Այսօր կը խոստովանինք որ մեր ճամբաները այնչափ ալ բարի չեն, եւ կ'անդրադառնանք որ բան մը կայ ընելիք մեր վիճակը բարելաւելու համար, Հայրենիքի մէջ եւ Սփիւռքի մէջ:

Վերի հատուածին մէջ Աստուած մեզ խոնարհութեան եւ աղօթքի կը հրաւիրէ: Կը հրաւիրէ որ իր երեսը խնդրենք եւ մեր ճամբաները փոխենք:

Որուն որպէս հետեւանք Ան կը խոստանայ մեր մեղքերը ներել եւ մեր երկիրը բժշկել:

Ականջ ունի՞րք Աստուծոյ այս հրաւերը լսելու, եւ յօժա՞ր ենք Աստուծոյ հրաւերին դրական պատասխան տալու:

Ֆիզիքական անկախութիւնը՝ լաւ է եւ սակայն, ըստ մեր Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսի՝ «Ճշմարտութիւնը պիտի ճանչնաք ու ան ձեզ պիտի ազատէ» (Յովհ, 8:32): «Եւ եմ ճշմարտութիւնը» կը

յայտարարէ Յիսուս: «Ուր Տէրոջը հոգին կայ, հոն ազատութիւն կայ» (Բ Կորնթ, 3:17):

Թող այս ազատութիւնը ըլլայ մեր ազգային եւ անհատական կեանքի նշանաբանը:

Միւսները բոլորն ալ ժամանակաւոր են եւ խաբուսիկ:

Հանրապետութեան Հրապարակին վրայի արձանը փոխարինուէր ուրիշ արձանով մը՝ Յիսուսի արձանով, որ իր թեւերը բացած օրհնէ նոր, անկախ Հայաստանը եւ թոյլ չտար որ չարը մուտք գործէր մեր պետութեան ժողովուրդի բոլոր բնագավառներէն մէջ, որպէսզի մենք մեր քրտինքին եւ մտքին բարիքները վայելէինք եւ որպէս տիպար հանրապետութիւն օրինակ ըլլայինք աշխարհի բազմազոյն եւ բազմալեզու ժողովուրդներուն:

Այսօր մենք մեր անցեալով կը հպարտանանք: Կը հպարտանանք որ մենք առաջին ազգն ենք որ Քրիստոնէութիւնը ընդունած ենք, շնորհիւ Գրիգոր Լուսաւորիչի եւ իր հետեւորդներուն: Կը հպարտանանք Տիգրան աշխարհակալով, վարդան Մամիկոնեանով, Նարեկացիով ու Շնորհալիով, կը հպարտանանք Մեսրոպ Մաշտոցով եւ մեր ոսկեդիրկ հայերէն լեզուով, առանց անդրադառնալու որ այս բոլորը բացակայ են այսօր, մինչ ներկան մերկացած է մեր սրբակենցաղ հոգեւորականներէն, մեր սրբազան գրականութեանն եւ մեր հիանալի լեզուէն: Մենք միայն մեր մականուններուն կցուած «եան» ին կը կրթինք մեր հայ ըլլալը փաստելու համար, երբ տարբեր երկիրներու մէջ ապրող մեր ժողովուրդը իւրացուցած է ու կը գործածէ տեղական լեզուն, նոյնիսկ ոմանք իրենց մականուններու «եան»ն ալ կտրած նետած են եւ տեղական մշակոյթի զոհ տուած ենք մեր նոր սերունդը:

Ո՞ւր են եւ ինչո՞վ կը զբաղին մեր կրօնական եւ ազգային առաջնորդները, անոնք որոնց սուրբ պարտականութիւնն է օրինակ ըլլալ իրենց ազգակիցներուն, նկարագիրով եւ ծառայութեամբ:

Այսօր կոչ մը կայ վերադառնալու մեզի անկախութիւն շնորհող Աստուծոյն, խոնարհելու Անոր առջեւ, հնազանդելու իր սրբազան խօսքին եւ վայելելու Անոր շնորհած բարիքները:

«Երանի այն ազգին որուն Աստուածը Տէրն է», կը յայտարարենք մենք Սաղմոսերգուին հետ:

Պարուի Սանճահարու՞մ

Շարունակուած էջ 6-էն

ուեց, որ Նոյեմբերի 29-ին բանակցութիւնը կը վերսկսուի: Դա անշուշտ իրանի շուրջ լարուածութեան նուագման, ըստ այդմ նաեւ կովկասի ու Հայաստանի շուրջ անվտանգային ռիսկերի որոշակի նուագման նախադրեալ է, միաժամանակ նաեւ իրանի ռեզիդենսը դերի առաւել աշխուժացման: Այդ հանգամանքը իրանի համար դարձել է Պաքուին սանճելու հիմք, թէ՞ Ատրպէյճանն ու Թուրքիան զուգահեռ փորձում են իրանի հետ

«ցրցամ» տալ իրենց այսպէս ասած երկկողմ «գործարքը»՝ իրան-Վեցեակ գործարքի վերականգնման մեկնարկին գուագահեռ: Այստեղ է, որ շատ կարեւոր է դառնում այն, ինչի մասին փորձեցինք խօսել նաեւ նախօրէին՝ Հայաստանի պատրաստ լինելը եւ գործընթացները դուրս չյայտնուելը: Այդ իմաստով թերեւս Երեւանի համար կարող է որոշակի մեկնակէտ դիտուել վրաստան-Հայաստան-իրան օրակարգային մերձեցման շուրջ աշխատանքը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



Սիտնի «Աստուածաշունչի Յանձնառութիւնը Քրիստոնեայի Յարափոփոխ Կեանքին Մէջ» Լսարանական Առցանց Ձեռնարկ Դասախօս՝ Դոկտ Զրայր Եպէֆան



27 Հոկտեմբերի երեկոյցան ժամը 7.00-ին տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Լսարանական Երեկոյ» ծրագրին առցանց չորրորդ դասախօսութիւնը հովանաւորութեամբ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Առաջնորդ Սրբազան հօր: Դասախօս՝ Աստուածաշունչի Ընկերութեան Ծոցի երկիրներու ընդհանուր քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէֆան: Նիւթ՝ «Աստուածաշունչի Յանձնառութիւնը Քրիստոնեայի Յարափոփոխ Կեանքին Մէջ»: Երկրէն դասախօսութիւնը եկած էին ակնդրելու նիւթով հետաքրքիր 55 անձիք, որոնցմէ 8-ը՝ Աստուածաշունչի Ընկերութեան զանազան երկիրներու ոչ Հայ բարձրաստիճան պաշտօնատարներ՝ Նորվեգիայէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Անգլիայէն, Նոր Զելանտայէն եւ այլ երկիրներէ: Թէքնիք հարցերու պատասխանատուութիւնը, ինչպէս միշտ, ստանձնեց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան:

Հանդիսավարուհի Տիկին Լօրա Արթինեանի բարի գալուստի խօսքէն ետք Սրբազան Հօր աղօթքով մեկնարկուեցաւ ձեռնարկը: Ապա, Տիկին Արթինեան, երկու լեզուներով՝ Հայերէն եւ Անգլերէն, ներկայացուց օրուան բանախօսը եւ զայն հրաւիրեց արտասանելու իր խօսքը: (Ձեկուցաբերին կենսագրութիւնը՝ աւարտին)

Դոկտ. Ճէպէֆան շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր եւ կազմակերպողներուն, ըսաւ որ ինք անբակտերիոս կապով կապուած է Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի թեմին, ուր եղած է երկու առիթներով եւ ուր իր երկրորդ այցելութեան՝ 2018ին, տեղի ունեցած է իր մեծածաւալ շուշազրուութեան՝ «Սփիւռքահայ Կեանքեր՝ Ինչպէս Որ Տեսայ» հատորին շնորհահանդէսը, կազմակերպուած Առաջնորդարանին կողմէ:

Ի՞նչ է Աստուածաշունչը, ի՞նչ կը հասկնանք «Յանձնառութիւն» բառով, ի՞նչ է Աստուածաշունչի պարգեւած յոյսը, ինչպէ՞ս կարողալ, հասկնալ, մեկնաբանել եւ իւրացնել Աստուածաշունչի պատգամը: Այս ընդհանուր հասկացողութեան բացատրութիւնն էր դասախօսութեան առանցքը:

Փառըր Փոյնթի միջոցաւ սահիկ առ սահիկ, երկու լեզուներով, Դոկտ Ճէպէֆան յստակ դարձուց իր պատգամը: Ան անդրադարձաւ լեզուամշակութային եւ լեզուամտածողութեան գործօններուն, որոնք

մեծ դերակատարութիւն ունին Աստուածաշունչը հասկնալու եւ մեկնաբանելու գործընթացին մէջ: Ասոր ցայտուն օրինակը բազմաթիւ Քրիստոնեայ յարանուանութիւններու առկայութիւնն է սակայն բոլորին աղբիւրը Աստուածաշունչն է իր երկու կտակարաններով: Բանախօսը հերքեց այն թիւր հասկացողութիւնը, որ իբր թէ Հին կտակարանը Հրեաներու պատմութիւնն է միայն եւ անոնց քաղաքական նպատակներուն սկզբունքներու ներշնչման աղբիւրը, եւ իբրեւ թէ երկու կտակարանները կապ չունին իրարու հետ: Ան ըսաւ որ այս վկայութիւնները յերկրածոյ են եւ այսօրուան քաղաքական հակամարտութիւնները օգտագործելով երկու կտակարանները իրարմէ անջատելու փորձեր են: Երկու կտակարանները իրար ամբողջացնող գիրքեր են, եզրակացուց դասախօսը:

Դասախօսը անդրադարձաւ ընկերային փոփոխութեանց, որոնք յարատեւ տեղի կ'ունենան մարդու կեանքին մէջ եւ լայն բացատրութիւն տուաւ անոնց մասին:

Աստուածաշունչի յանձնառութեան ծիրէն ներս Դոկտ Ճէպէֆան անդրադարձաւ զանազան հարցերու եւ հետեւեալ պատգամներուն՝ «Սիրէ դրացիդ քու անձիդ պէս» (Մատթ. 22:39) ի եւ «Բայց կ'ըսեմ բոլոր անոնց որ կը լսեն, սիրեցէք ձեր թշնամիները» (Ղուկաս 6:27): Ան վերլուծեց զանոնք մարդկային նաեւ հայկական տեսանկիւններէ դիտուած: Այս նիւթերուն շուրջ եղած հարցումներուն լայն բացատրութիւն տուաւ դասախօսը շեշտ դնելով ներողամտութեան գործօնին բայց նաեւ արդարութեան ունեցած կարեւորութեան վրայ:

Դասախօսութեան աւարտին Դոկտ Ճէպէֆան պատասխանեց ակնդիրներու բոլոր հարցումներուն:

Տիկին Լօրա Արթինեան իր շնորհակալութիւնը յայտնեց դասախօսին բանախօսութեան շահեկանութեան ինչպէս նաեւ այն ժեսթիկ համար, որով Դոկտ Ճէպէֆան իր նոր պատրաստած «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ»-էն 30 օրինակ, իսկ հեղինակած գիրքին՝ "Bible Engagement: The Discovery of Faith, Hope and Self" 10 հատոր պիտի նուիրէ Առաջնորդարանին:

Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ բարձր գնահատեց Դոկտ Ճէպէֆանի արժանիքները

Վարչաւիոյ Մէջ Տեղի Ունեցաւ 44-օրեայ Պատերազմին Նուիրուած Լուսանկարներու Ցուցահանդէս



Նոյեմբեր 3-ին Վարչաւիոյ մէջ եւ «Պատմութեան հետ հանդիպման տան» մէջ տեղի ունեցաւ լեհ յայտնի ռազմական լրագրող եւ պատմաբան Վիթոլտ Ռեպիեթովիչի եւ Արցախեան 44-օրեայ պատերազմի վաւերագրութեան նուիրուած «Պատերազմի մղձաւանջը» վերատուրեմամբ լուսանկարներու ցուցահանդէսին բացումը: Այս մասին կը յայտնեն Լեհաստանի մէջ Հայաստանի դեսպանութենէն:

Միջոցառման ընթացքին մասնակիցներուն ներկայացուեցան բեմադրիչ Եատովիկա Նովաքովսկայի «Պատերազմի եւ խաղաղութեան երկիր» վաւերագրական ֆիլմէն հատուածներ: Միջոցառումը կազմակերպուած էր Լեհաստանի մէջ ՀՀ դեսպանութեան, Լեհ-հայկական հիմնադրամի եւ «Պատմութեան հետ հանդիպման տան» հաստատութեան համագործակցութեամբ:

Միջոցառումը եւ նահատակուած հայ հերոսներու յիշատակին նուիրուած աղօթքով բացաւ լեհահայոց հոգեւոր հովիւ Հայր Տարօն Վարդապետ Ղուլիկեանը:

Այնուհետեւ, ներկաներուն դիմեց Լեհաստանի մէջ Հայաստանի դեսպան Սամուէլ Մկրտչեանը: Ողջունելով ներկաները եւ ան շնորհակալական խօսք մը ուղղեց Լեհ-հայկական հիմնադրամի նախագահ Արսէն Յովսէփեանին եւ «Պատ-

մութեան հետ հանդիպման տան» հաստատութեան ղեկավարութեան: Մկրտչեանը անդրադարձաւ 2020 թուականի սեպտեմբեր 27-էն մինչեւ նոյեմբեր 9-ը Արցախի դէմ ատրպէճանաւոր քաղաքական հրահրմամբ 44-օրեայ պատերազմի արհաւիրքին: Ան ընդգծեց, որ պատերազմը խաթարեց Արցախի ժողովուրդին խաղաղ եւ ստեղծարար կեանքը եւ հանգեցուց բազմահազար մարդկային կորուստներու եւ ասուլիս նիւթական վնասներու: Այդ բոլորին հանդերձ, արցախահայութիւնը կը շարունակէ հաստատակամ մնալ իր հայրենի հողին վրայ ապրելու եւ արարելու: Դեսպանը օրուան հրամայականը դիտարկեց Ատրպէճանի մէջ եւ միջազգային մարդասիրական իրաւունքի չափանիշերու կոպիտ խախտմամբ պահուող հայ ռազմագերիներու եւ քաղաքացիական անձանց անյապաղ ազատ արձակումը եւ ատրպէճանական վերահսկողութեան տակ գտնուող տարածքներուն մէջ հայ մշակութային ժառանգութեան պահպանութիւնը:

Այնուհետեւ դեսպան Սամուէլ Մկրտչեանն ու Արսէն Յովսէփեանը ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակուցի եւ մարմնամարզութեան նախարարութեան բարձրագոյն պարգեւը Ոսկէ մետալը յանձնեցին Եատովիկա Նովաքովսկային եւ հայաստա գործունէութեան համար:

Եւ անոր Աստուածաշունչի տարածման աշխատանքը: Սրբազանը խիստ կարեւոր նկատեց Աստուածաշունչը կարգալը, զայն թարգմանելը եւ զայն մեկնաբանելը, աշխատանք մը որ Աստուածաշունչի Ընկերութիւնը կը կատարէ եւ այդ աշխատանքներուն մէջ իր հսկայ ներդրումը ունեցած է եւ կը շարունակէ ունենալ Պարոն դասախօսը:

Խիստ հետաքրքրական հանդիսութիւնը փակուեցաւ Սրբազան Հօր աղօթքով:

Յակիրճ Կենսագրութիւն Դոկտ Զրայր Եպէֆանի

Դոկտ Հրայր Ճէպէֆան ծնած է Պէյրութ: Երջանաւարտ է Հայկազեան Համալսարանէն: Մագիստրոսի տիտղոսը ստացած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն իսկ դոկտորական վկայականը՝ Նիւ Եորքի Աստուածաբանական Համալսարանէն՝ 2014ին:

1980-էն ի վեր կը գործէ

Աստուածաշունչի Ընկերութեան մէջ, 1993-էն ցայսօր Ընդհանուր քարտուղարն է Աստուածաշունչի Ընկերութեան Ծոցի երկիրներուն: 2003-2006 եղած է Աստուածաշունչի Ընկերութեան խորհրդատուն իրանի եկեղեցիներուն հետ կապ հաստատելու եւ Աստուածաշունչի տարածման ծրագրերը մշակելու համար:

Ժրաջան ծառայող Լիբանանի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ, ան վարած է շատ մը պաշտօններ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու կեդրոնական վարչութեան մէջ, Խնամակալ Մարմնի անդամ՝ Հայկազեան Համալսարանի եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Համալսարանի եւ բազմաթիւ այլ Աւետարանական հաստատութիւններու:

Այժմ կը բնակի Կիպրոս: Անդամ է Հայաստան Համահայկական Հիմնադրամի Կիպրոսի մասնաճիւղի խնամակալ մարմնին:

Տիգրան Ա. Երուանդունի Թագաւոր

«Երուանդակերտ դաստակերտի այգիների բազմութիւնը նմանուել էր Խիտ արտեւանունքի գեղեցիկ գծին, որի հիւսիսային Կողմի կամարած եւ դիրքը իսկապէս համեմատուում էր գեղեցիկ կոյսերի հոնքերին»

Սովետս Խորենացի

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Երուանդակերտ, Երուանդաշատ ոստան, Արմինա աշխարհի Այրարատ նահանգի Երասխաձոր գաւառում, Արգիշտի-Արամայիս արքայի որդի Երաստի անունով՝ Երաստ-Երասխի ու Ախուրեան գետերի միախառնման ափերին: Արմինա լեռնաշխարհի հազար-հազար ակներից պայթած Երասխի ջրերը նրան գրկած ահագնացած վագում, զարկում դաստակերտի այգիներին, զարկում նոր սահման եղած արեւելեան կողմը հայոց աշխարհի հանդերին: Արմին-Հայ շինականներին «գէնք չտուին», որ զնար կրակ տեղար դուռնանի վրայ, կանչէր՝ այդ ո՞ւմ աշխարհն էք ուզում իրար մէջ բաժանել:

Ախուրեան գետն էր որոտագին վագում, փրփրում, որ շուտ հասնէր Երասխի ջրերին: Երբ բախուեցին, պիտի տեսնէիր ինչպէ՞ս էին փաթաթուում իրար, գրկում իրար, կարօտից զարկում համբոյրից փշրում, հովիկները այն իրենց թելիկներին վերցրած բերում հպում մեր երեսներին: Լացում էինք կարօտի ցաւից, ջինջ արցունք ժայթքում մեր ակներից, այն հոսում գետերի ջրերի կաթիլների երեսներին, որ տանէին օտարած մայր հողին: Եթէ նախնիներիդ հին աստուածների ոգին կայքու սրտում, հապա ինչպէ՞ս արցունք չհոսի հոգուդ լոյսի կանթեղներից: Անեացած, գնում փաթաթուելու նրանց գրկախառն ալիքներին: Ետ կանչեցին, այն ափին հակող արիւնուշտ դուռնանի գինուրը կարող էր գարկել:

Գնացինք Ախուրեանի ու Երասխի ջրերի ողջագուրման ափին՝ երկու կողմերի բանակցութիւնների համար կառուցուած քառաշէն տնակ, արմինների արեւմտեան կողմն աշխարհի երկրի նախնիների ծնունդ, իմ բարեկամ Մկրտիչի ուղեկցութեամբ: Որպէս Արմին-Հայ, գնում ենք նոր հաւատքի Աստուծոյ որդու ընծայութեան պատարագին, չիշատակելու մարդկութեան մեղքերի թողութեան նրա գոհաբերութիւնը, ունկնդրելու նրա տառապանքին նուիրաբերուած շարական երգերը, ողորմի ասելու յաւիտենական նութեան ճամբաներով անցնող մեր ձաւորների հոգիներին: Արմին-Հայերի նոր հաւատքի Աստուծոյ փառաբանմանը նուիրուած վարդապետների երկնած շարականները, իրենց նախնիների մեհեաններում հին հաւատքի աստուածներին սպասարկող քրմուհիների երկնած երգերը՝ ցեղի ոգեղէն կրակի լոյսի արձագանգներն են: Գնա՛ Գառնի արձագանգ մեհեան, մտի՛ր Անահիտի, Վահագնի ծնունդի տօնախմբութիւնների շուրջ պարի շարքեր, բարձրացի՛ր մեհեանի սրահ, ունկնդրի՛ր քրմուհիների տաղերը, նրանք շարականներ չէ՞ն, լեռնաշխարհի նոյն ջրերի, հովիկների երգերի հնչիւններ չէ՞ն: Այն պատարագ է իրենց հին աստուածների յաւերժութեանը:

Երասխի միւս ափին, երեք կողմերից անառիկ բլուրի գագաթին, կիսաբանդ բարձր պարիսպների մնացորդներն են, անտեղեակ մարդիկ ասում, որ Արշակունի Արշակ Բ. քաջ թագաւորի Սիւնեաց Բակուր Նահապետի ազնուագարմ Փառանձեմ թագուհու բերդն է այն: Չէ՞, պատմագիրները հաւաստում են, որ Երուանդաշատը կառուցուել է Երոտանդ Դ. թագաւորի կողմից, որպէս մայր ոստան ու պաշտպանական ամրոց: Ծինականների հետ գնում մօտիկից անցնող Ախուրեան գետի ափեր: Երասխի ջրերի նման «քայլամուտ» գնում ենք նրա ափերի արահետով: Քառանկիւն հաստ սիւներ, երեսները իրենց երկրի գինանշանով «դիտում» մեզ: Հայոց աշխարհից մնացած այդ մի փշուր հողն էլ Ռուսի սահման դարձել, որոնք սպաննել էին, վեց հարիւր տարիներ յետոյ ազատութիւն նուաճած արմին մարդկանց երկիրը: Ո՞վ

ուստանի շուրջ այգիների ու հանդերի գեղեցիկութիւնը նմանեցնելով չքնաղ կոյսերի պայծառ արտաքինին: Խորենացին վկայել է, որ Երասխի հունը Արմաւիրից հեռանալու եւ ձմռանը խմելու ջուր չլինելու պատճառով, Երուանդը արքունիքը փոխադրում նրա արեւմտեան կողմը, Երասխը շրջապատած միակտոր ապառաժ բլուրին եւ նրա վրայ կառուցում նոր մայր ոստան: Բլուրը պատուարում է հաստ պատերով, դնում պղինձեայ դարպասներ, մինչեւ ներքեւ երկաթէ սանդուխներ, դաւադիրներին բռնելու համար պատերի մէջ որոգայթներ լարում: Ոստանը ջրով ապահովելու համար բլուրի պարիսպների տակից մինչեւ ջրի երես փապուղիներ փորել: Երուանդ թագաւորը մայր ոստանը այլ տեղանք տեղափոխել ոչ այնքան բնակլիմայական, ինչքան որ քաղաքական անցքերի պատճառներով: Երուանդաշատից բանուկ ճանապարհ էր գնացել մինչեւ Արտաշատ ու Տիգրանակերտ, նպաստել մշակույթային ու առեւտրական յարաբերութիւններ հաստատելու հարեւան երկրների հետ: Երուանդաշատը, մ.թ.ա. 360 թուականին կործանել էր Պարսից թագաւորի զօրքերը: Պահպանուել են նրա աւերակները, կանգուն են բլուրի ամրոցի պարիսպները, որոնք յուշ են Երուանդունի թագաւորական տան կառուցողական հզօր իմաստութեան, Հայկական Սրբազան Լեռնաշխարհում Արմինայի նախնաների հազար դարերի պետական իշխանութեան: Այն պիտի մարմնաւորէր նաեւ նրանց ցեղի եւս երեքհարիւր ամեայ շարունակական պետականութեան փառքը, Արմինա պետութեան լոյսը եւս երեք հարիւր տարիներ կարմրած լոյսով գիտատղերի նման պիտի անցնէր պատմութեան բառուղիներով:

Երուանդունիների թագաւորական տան փառքին պատարագելուց յետոյ, շարունակում եմ նրանց թագաւորական տան պատմւը, ի մասնաւորի Երուանդ Ա. Սակաւակեաց թագաւորի որդի՝ քաջակորով Երուանդեան Տիգրանի Ա. ի փառքը:

Նախքան Երուանդունի «Երուանդ Սակաւակեաց» թագաւորի որդի Տիգրանի Ա գահակալութեան պատմւը, պիտի նկարագրեմ գերեւորուած զօր ու թագաւորական ընտանիքի դատավարութիւնը, Տիգրանի իմաստուն, պերճախօս մասնակցութիւնը որպէս պաշտպանական կողմ:

Յոյն գորավար-պատմագիր Քսենոֆոնը, իր հռչակաւոր «Կիւրոպետիկ» աշխատութիւնում նկարագրել է Պարսկաստանին թագաւորելու Կիւրոսի կեանքը, եւ որոշ մանրամասնութիւններ հայերի ու պարսիկների, Հայաստանի թագաւորի ու որդի՝ Տիգրանի, յարաբերութիւնների մասին: Իմանալով, որ արեւելքի երկու հզօրներ՝ Մարաստան ու Պարսկաստան պատերազմում են, Երուանդ Ա. Սակաւակեաց թագաւորը սկսել էր չկատարել իր ստանձնած հարկային պարտաւորութիւնը: Մարաստանը խոհեմ էր համարել այդ պահին ուժ չկիրառել Երուանդունի պետութեան դէմ, վախենալով, որ Երուանդունիների թագաւորը կարող էր թշնամու կողմն անցնել: Յարմար նկատել էին գաղտնի գործել: Կիւրոսը, կասկածի տեղիք չտալով նպատակով, սակաւաթիւ ուղեկիցներով հասնում Արմինայի սահմաններ, իբր իր սովորութեան համաձայն որսի է դուրս գար

Արմինա երկրի որաստեղիներ: Մարաստանի բանակը առաջնորդած Կիւրոսը թագաւորը խուսափողական ընթացք ցուցաբերել, իբր թէ գնում Ասորիքի սահմանի իր բերդերի պաշտպանական ամրութիւնների ստոյգայցի: Յարմար պահին շեղում գօրքի ընթացքը, մօտենում Արմինայի սահմանին, բանակում Կիւրոսից փոքր հեռաւորութեան վրայ, որ նպաստաւոր պահին օգնութեան փութար:

Կիւրոսը, իր գօրքի մի ջոկատին հրամայում է գրաւել այն լեռները որտեղ կարող էր ապաստանած լինէր Երուանդ Սակաւակցից թագաւորը: Զօրական միաւորումներով արշաւում ու տիրում երուանդունիների մայր ոստան՝ Տուշպային: Բանբեր է ճամբում Երուանդ թագաւորի մօտ, պահանջելով ներկայանալ, բերել համապատասխան հարկը եւ համաձայնագրով պարտաւորուած հետեւակ ու այրուածի ջոկատները: Կիւրոսը արդէն նուաճել էր մարեւրի երկիր՝ Մարաստանը, Արմինա-Հայաստան երկիրն էլ իր սէրութեան գերիշխանութեանը եթակայ պիտի լինէր եւ Մարաստանի փոխարէն պարտաւորուէր իր կայսրութեանը հարկ վճարել:

Կիւրոսի պահանջը վրդովեցնում է Երուանդ թագաւորին, ընտանիքի բոլոր անդամներին ապահով լեռներ ուղարկում, իսկ ինքը Արմինայի գօրքը դիրքաւորում մի լեռան բարձունքին: Նկատելով, որ շրջապատուած է Կիւրոսի բանակի կողմից, ստիպուած իջնում իր բանակատեղիից, ներկայանում իր երկիր ներխուժած գօրավարին:

Կիւրոսի եւ Երուանդ թագաւորի միջեւ տեղի են ունենում երկար բանակցութիւններ: Կիւրոսը պահանջում է, որ ինչո՞ւ Երուանդ թագաւորը չէր կատարել կողմերի միջեւ կնքուած պայմանագրով ստանձնած պարտաւորութիւնները: Երուանդ թագաւորը արդարանում իր ազատասիրութեամբ, թէ՛ «Ուզում էր ազատութիւն ձեռք բերել եւ այն թողնել իր որդիներին»: Բանակցութիւնների ատեն, թագաւորի որդի Տիգրանը վերադարձած լինելով ուղեւորութիւնից, տեսել շղթայակապ եղած կնոջը ու պալատի ազնուական մարդկանց: Տիգրանը խիստ վրդովուել էր:

Երուանդ թագաւորի դատավարութիւնը կայանում է պարսիկների, մետացիների առաջնորդների ու նրանց արքունիքների անդամների ներկայութեամբ: Տիգրանը, զգալով հօրը սպառնացող վտանգը, յողողող ձայնով դիմելով Կիւրոսին, պահանջել հանդէս գալ իր թագաւոր հօր պաշտպանութեամբ: Տիգրանը, համարձակ խօսքով բանավիճում Կիւրոսի հետ, պերճախօս ատենաբանութեամբ պատճառաբանում իր հօր ազատապրելու կամքի ցանկութիւնը: Տիգրանը, Կիւրոսին յուզիչ հարցադրումներ առաջադրելով, յաջողում պատժից ազատել հօրը: Դատավարութեան ժամանակ Տիգրանը յայտարարել է, որ հօրը նկատմամբ պատիժը նպաստաւոր չէր լինի Մարաստանին, կարելի էր ծառայութեան վերցնելով օգտագործել նրան: Հօրը կրած պարտութիւնը նրան խելք է դարձրել, նա արդէն պատժուել է՝ «Երկիւղը մարդկանց աւելի է պատժում, քան իրական պատիժը»:

Կիւրոսը ընդունել է, որ հայոց Երուանդ Ա. թագաւորը յախուռն

Մշոյ Բուլանը Գաւառի

Շարունակուած էջ 14-էն

որ այսօրինակ իրավիճակի այլեւս երբեք չպիտի առճակատուի հայ ժողովուրդը:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ] ՀԱՅՈՑ Տ[ԵԱՌՆ Տ[ԵԱՌՆ ՄԿՐՏՁԻ Ի ՄՇՈՅ ԲՈՒԼԱՆԻ ԳԱՒԱՌԻ ԹՈՏՆ-ՋՈՒՐ ԳԵՂՋ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՆԱԿՉՈՒՀԻՈՅ ՀՈՒՓՍԻՄ-ԵԱՅ ՂԱԶԱՐԵԱՆ ԸՍՏ ԱՌՆ՝ ԴԱԻԹԵԱՆՑ

Աղերսախառն խնդիր Արդէն քաջայայտ իսկ է Ձերոյին Վեհափառութեան գտածանակիր տարագրութիւնը թշուառ ազգայնոց մերոց՝ ի հայրենի յերկրէ եւ տանց իւրեանց՝ ի ձեռաց բռնակալ տէրութեանն Օսմանիոյ եւ բարբարոս ազգաց հպատակաց նորին, որք կեղեքեն եւ լլկեն զորդիս եւ զանտերուսն ազգայինս մեր անխնայաբար: Ի թիւս որոց եւ թշուառս՝ հանդերձ չորիւք մատաղ զաւակօք իմովք եւ մշտնջենական անբուժելի ցաւօք, դեգերեալ արամբ իմով Մկրտչիդ, որ կարօտ աւուրն պարէնի անկեալ տնի ի մահճիս հիւանդութեան յերեւան քաղաքի: Թողով զիս որդուովքս՝ հանդերձ ի սուգ թախծութեան ի դրուսս այլոց նօթի եւ ծարաւ, յօրէ տարագրութեան մերոյ, որ լրացուցանէ աւաստիկ ամիսս իբրեւ գերկոտասան: Արդ, ստիպեալ յայտոցիկ դառնաղէտ հանգամանաց, պարտ անձինս վարկայ մատչել յայտու աղերսագրով իմով ի համբոցր ոտիցդ սրբութեան եւ խոնարհաբար հայցել զՁերոյինն մարդասիրական գթութեան առ իս եւ զաւակունս իմ, որք հանդերձ թշուառացեալ հարբ իւրեանց զարտօսը յաչս աղաղակեն. «այ՛ր, գթա՛ ի մեզ եւ ողորմեա՛», յուսալով՝ զի գաղաչանս իմ եւ գաղաղակ նոցին ընկալցի Վեհափառութեան Ձեր ի գութ ինամողական եւ մի՛ անխայեցէ սրբել զարտօսը յաչաց մերոց՝ տալով մեզ զօրապահիկն մեր զպարէն՝ ցօր ելանելոյ մեզ աստի կենացս:

ԸՍՏ ԽՆԴՐԱՆԱՅ ԵՒ ՎԱՍՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՏՈՒԻ ՀՈՒՓՍԻՄԵԱՆ Ի ՏԵՂԻ ՆՈՐԱՍՏՈՐԱԳՐԵՑԻՄԱՄԻԿՈՆ ՏԵՐՄԱՏԹԻՆՍԵԱՆ Ի 1և Օգոստոսի, 1895 ամի յերեւան

Գերշ. Տ. Վիգէն Արք. Այբազեան

Շարունակուած էջ 8-էն

Սուրբ էջմիածնի մէջ եպիսկոպոս ձեռնադրուած է: Եղած է Շուկտի առաջնորդ՝ 1992-96 թուականներուն, Հայ Օգնութեան Ֆոնտի գրասենեակի տնօրէն՝ 1997-99 թուականին: 2007 թուականին անընտրուած է Միացեալ Նահանգներու Եկեղեցիներու Ազգային Խորհրդի (NCC) նախագահ եւ պաշտօնավարած է 2008-

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԱԶՆԱԳՈՅՆ Ա[ՍՏՈՒԱՅԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ] ՀԱՅՈՑ Տ[ԵԱՌՆ Տ[ԵԱՌՆ ՄԿՐՏՁԻ ՊՈՒԼԱՆԻ ԿՈՊԱ ԸՌԷՍ ԶՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆՑԻ

Ամենախոնարհաբար խնդիր Վեհափառ Հայրիկ, Դիմեցի այսօր Վեհութեանցդ ոտք ոչ թէ ողորմութիւնն հայցելու, զի մասնաւոր ողորմութիւնով անկարելի է ցաւերս դարձանուին: Հապա, մի շրջաբերական գիրը, որով թերեւս կարողանամ Ձերին հայրական բարեսրտութեան շնորհիւ կրկին կենդանանամ եւ ընտանիքս ազատեմ: Վեհափառ Տէր, իմ անուր Յովհաննէս է: Ես էնքան հարուստ չէի թէեւ, բայց մեր գերդաստանի անուր միշտ կը լինէր, ունէր տեղ մեր 500 տնաւոր գիւղի բնակիչների մէջ: Մեր տունը անուր ունէր: Մեր հիւրերը բոլոր մեր շէն կէնէին, մեր յարկի տակ կը կերակրուէին թէ՛ փաշան եւ թէ՛ Կոփին երեցնեւորով: Հիմա այս տունը գոցուած է եւ երեսունի չափ ընտանիքս մոխրի վրայ նստած է՝ մերկ, քաղցած: Այն ամէն կարողութիւն վերջապէս կորաւ գնաց: Տաւարներուս գոմերը եւ ցորենիս ամբարները պարապ մնացին: Երկու անգամ բռնուեցայ: Ամէն մի անգամին 50 ոսկի դուկանք տալով ազատուցիմ: Յետոյ, երբ տեսայ, որ կորուստս անհրաժեշտ է, թողի, ընտանիքս Ալստուծոյ կամաց հանձնելով՝ այս կողմ փախայ: Եւ այս վեց ամիս էր, որ Ապարանի Խազնաֆար գիւղ յամոթած մնացեր էի, եւ յասօր ելլելով կաղեկաղ զիս Ձերին Վեհափառութեան ոտք հասուցի: Վեհափառ Տէր, խնդրեմ լալով ողորմածութիւնդ՝ իմ խաւար աչքերուս մի լո՛յս շնորհէք, զի Դուք էք այսօր զորութիւն ե՛ւ հոգեւոր ե՛ւ մարմնաւոր լուսատու արեւով: Անոր հ[ա]մ[ար] ծնկաչօք Ձերին գանձերով լի սրտի դուռն զիմեցի: Հիւանդ եմ, պարտատէր եմ, օտար եմ, ծերացած եմ, հայ եմ եւ Ձերին վիրաւոր ոչխարներէն: Անոր հ[ա]մ[ար] մատչելով Ձերին Ս[ր]բազնագոյն զարշապրոց դիմեցի եւ խնդրում եմ, որ իմ միակ խնդիր կատարուի, որ աղօթարար լինիմ Ձեր անգին կենաց:

ԸՆԴՄԻՇՏ՝ ԶՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆՑ, ԿՈՊԵՑԻ 1896, Ապրիլ ի 6ը, Վաղարշապատ

Տիգրան Ա. Երուանդունի Թագաւոր

Շարունակուած էջ 17-էն

պայքարել ազատութեան համար, սակայն երբ պարտուողը խուսափում է պարտականութիւնների կատարումից, գովասանքի արժանի չէ, այլ՝ պատժի: Նա, Երուանդ թագաւորին յանցաւոր է համարում, յայտնում, որ մեղաւոր կողմը երկու դէպքերից միայն մէկը կարող է ընդունել՝ ստելով յանձն չառնել սխալը, կամ ընդունել մահուան վճիռը: Կիւրոսը չի շէլ էր, թէ ինչպէ՞ս էին իրենց երիտասարդութեանը միասին որսորդութեան գնացել եւ ինչպէ՞ս էր Տիգրանը աւելի հմուտ նետ ու աղեղ օգտագործել: Կիւրոսը որոշակի յարգանք էր տածում իր հին ընկերոջ նկատմամբ: Մտածել էր, ի՞նչ շահ կարող էր ունենալ եթէ նրա հօրը մահուան դատապարտէր: Արմինայի թագաւորութիւնը կործանելու փոխարէն, Կիւրոսը աւելի խոհեմ է համարել վստահութիւնը շահել իրենից ոչ նուազ հօր թագաւորի, որը երկրին աւելի վնաս կը պատճառէր քան հայրը կարող էր:

Տիգրանի պաշտպանական ճառը պատժից ազատել էր Երուանդ թագաւորը հօրը: Այդ նոյն գիշերը Կիւրոսը իր բանակատեղիում խնձոյք էր կազմակերպել ի պատիւ Արմինայի Երուանդ թագաւորի ու իշխան Տիգրանի: Արմինայի ու աքեմենեան Պարսկաստանի միջեւ հաշտութեան դաշնագիր է կնքուել: Կիւրոսը հարցրել է Երուանդ թագաւորին, ինչքա՞ն դրամ կտար իր յանցանքը ներուելու համար, նա պատասխանել էր, որ Կիւրոսը կարող է օգտագործել երկրի հարստութիւնը այնպէս, ինչպէս որ կամենար: Արմինայի թագաւորը պարտաւորուել է երկրի ութը հազար «այր ու ձի» զորաբանակից 4000-ը եւ 40000 հազար հետեւակ զօրքից 20000 մարտիկներ տրամադրել Կիւրոսի ռազմական գործողութիւններին մասնակցելու համար: Երուանդ թագաւորը պարտաւորուել է նաեւ հատուցելու իրենց հասարակաց թշնամի Բաբելոնը նուաճելու Կիւրոսի կատարելիք ռազմական ծախքերը: Երուանդ թագաւորը բացայայտել էր, որ իր գանձարանի հարստութիւնը 3000 տաղանդ (դրամական չափ) արծաթ (այժմեան 66,240,000 տոլար) է: Աւանդական սովորութեան համաձայն, նոյն այդ գումարը պահեստաւորուած էր Տուշպա ծովի ստորջրեայ քարայրում: Դարերի ընթացքում շատեր փորձել էին տիրանալ Երուանդունի թագաւորի հարստութեանը, սակայն... ի վուր:

Ընթրիքի ատեն տեղի ունեցած զրոյցի ընթացքում Կիւրոսը հարցրել էր Երուանդ թագաւորին՝ ի՞նչ պիտի տար իր կնոջ ու զաւակների ազատութեան համար: Թագաւորը պատասխանել էր, այնքան ինչքան որ կը կարողանար: «Այնուհետեւ, Կիւրոսը շրջուելով դէպի Տիգրանը, հարցրել էր ինչքա՞ն կտար իր կինը ետ առնելու համար: Տիգրանը նոր էր ամուսնացած եղել, այնպէս սիրել կնոջը: Ոտքի ելնելով, յանդուգն խօսքով ասել՝ «Կիւրոս, կեանքս կը տայի գերութիւնից նրան ազատելու համար»:

Այդ ճշմարիտ պատմւոր, Արա Գեղեցիկ թագաւորի կռիւը իր Նուարդի համար եւ իրենց կանանց

ու ընտանիքների պատուի համար բազում նման այլ զօհաբերութիւնները՝ արմինների պատմութեան վկայութիւնների արձագանգների արտացոլումն են: Արմին-հայերը՝ իրենց կանանց պատուի ու ընտանիքների համար մղած կռիւը՝ նրանց հանդէպ տածած սիրոյ, նուիրուածութեան զօհաբերութիւնն է: Նման զօհաբերութիւն երեւի հազուադիւր է այլ ազգերի պատմմաներում: Արմին-Հայ մարդ, գիտե՞ս ինչու: Արմին-հայերի, «բոլոր հիւսիսային ազգերի մէջ վեհագոյնդ» Մովսէս Խորենացի Պատմաճօր սրտի պատգամը եւ ամենասիրելի աստուածուհու՝ Ոսկեմայր Անահիտ դիցուհու պաշտամունքի յուշն է: Հաւատացել էին, որ իրենց Ոսկեմայրը, մանչուկը գրկին եկել Արմինա արարչական երկիր, իրենց լեռների լանջերի, դաշտերի հողը, իրենց այգիները, իրենց լեռնաշխարհը մայրացրել: Մարդացրել էին Ոսկեծին, Ոսկեղենիկ Անահիտին, նրան նուիրուած մեհաններում Արմին-հայերը փառաբանել նրա արարչութիւնը, գրուցել նրա հետ, իրենց նոր բերքի երախայրիքը նուիրել: Հեռու հարաւի Մայրն էլ պատկերել են Յիսուս մանչուկը գրկին, արդե՞օք հիւսիսի արարչական երկրի աւանդութեան արձագանգը չէ՞ր:

Մուսաների պաշտամունքի լեռներում դուշմանի դէմ մղուած կռոււմ, աշխարհին գրաւոր պատգամ էին յղել, որ իրենք կռոււմ են իրենց հողի ու իրենց ԿԱՆԱՆՑ պատուի համար: Այդ լեռների կռուի բոցերից էր Արմին-Հայ լեռնական կտրիճների կամաւորական լեգէոնի կապորալ Արմէնակը՝ իր անդրանիկ Պօղոս որդու հոգու տաճարի ջահերը վառել: Որպէս Ար-Արա կրակի, լոյսի արեւ աստուծոյ խարոյկից վառուած ողիմպիական ջահ, այն վեր պահած քայլում եմ մոլորակի ճամբաներով: Իմ յաւերժութեան ճամբաներին լոյս եմ փռելու, գնալու Աստուածամարդ Հայկի երկնային տաճարում Լազիսեան գերդաստանիս ճրագը վառելու: Աւանդապահ է Արմին-Հայը, հազար-հազար տարիների իր նախնիների պատմութիւնը պեղում, այն լցնում իր մանչերի անուշ սրտիկներում: Հիմա էլ Հայ մարդը իր կնոջ պատուի համար կեանքը կը տայ, նուիրուած է ընտանիքին, ծնողներին, գերդաստանի մարդկանց:

Աքեմենեան Պարսկաստանի Կիւրոսի եւ Արմինայի Երուանդ Ա. թագաւորի միջեւ հաշտութիւն է կնքուել: Հայաստանը պարտաւորուել է նաեւ վճարել հարկի կրկնակին եւ նոյնքան նուիրել անձամբ Կիւրոսին: Երուանդ Ա. թագաւորը Կիւրոսի բանակին նուէրներ ուղարկում ու երկու անգամ աւելի դրամ քան նա պահանջել էր: Կիւրոսը հեռանում է Արմինայից, Բաբելոնի դէմ համախումբ արշաւանք կազմակերպելու համար, Տիգրանի հրամանատարութեամբ իր երկիր տանում Արմինայի այրուածի ու հետեւակ զօրական գունդերը: Ճշմարիտ էր Յոյն զօրավար-պատմագիր Քսենոֆոնը, որ պիտի գրէր՝ «Արմենիան մեծ ու բարեկեցիկ»: Ճշմարիտ է ասուած...: Ըստ պատմաբանների Խորենացի Երուանդունի Տիգրանին ու Արտաշէսեան Տիգրանին նուականացրել:

(Շարունակելի)

ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ
ՄԱՆՈՒԷԼ ԱԴԱՄԵԱՆԻ մահուան տխուր առթիւ (մահացած Լոնտոն) Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Շուշան Վարդանեան-Մոլոյեան իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Լիլիթին եւ համայն պարագաներուն: Առ այդ 150 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

«Լիվերփուլ» Պարտուեցաւ Լոնտոնի Սեշ, «Չելսին» Միաւորներ Կորսնցուց, Բայց Մնաց Առաջին Տեղը



Անգլիոյի առաջնութեան 11-րդ հանգրուանին «Լիվերփուլ» Լոնտոնի «Օլիմպիական» խաղադաշտին վրայ մրցեցաւ «Ռեալ Յեմի» հետ եւ պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

Առաջատար «Չելսին» Լոնտոնի մէջ ընդունեց «Պարսլին» եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

Ռեալ Յեմ 23 կէտով հաւասարեցաւ երկրորդ տեղը գրաւող ախոյեան «Մանչեսթըր Սիթի» հետ եւ երրորդն է: «Լիվերփուլ» ունի 22 կէտ եւ չորրորդ տեղը կը գրաւէ:

«Չելսին» 26 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտով առաջ է երկրորդ տեղը ընթացող ախոյեան «Մանչեսթըր Սիթի»:

«Բարնլին» 18-րդն է՝ 8 միաւոր: Առաջատար «Չելսին» ունի 26 միաւոր:

«Սելիլիան» Պարտութեան Մատնեց «Պետիսին» Եւ Հաւասարեցաւ «Ռեալին»

Սպանիոյի առաջնութեան 13-րդ հանգրուանին «Սելիլիան» հիւրընկալուեցաւ «Պետիսին» կողմէ եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

«Սելիլիան» (12 խաղ) 27 կէտով հաւասարեցաւ երկրորդ տեղը գրաւող Մատրիտի «Ռեալին» հետ (12 խաղ):

«Ռեալ Սոսիտատը» հիւրընկալուեցաւ «Օսասունայի» կողմէ եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Առաջատար «Ռեալ» Մատրիտի մէջ մրցեցաւ «Ռայօ Վալիեկանոյի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով:

«Պարսելոնան» Վիգոյի մէջ հիւրընկալուեցաւ «Սելտայի» կողմէ: Առաջին կիսախաղին 3:0 արդիւնքով յաղթելէ յետոյ կատալոնական խումբը գլխաւոր մարզիչի պաշտօնակատար Սերժի Բարժոնանի ղեկավարութեամբ չկարողացաւ յաղթանակի հասնիլ:

Երկրորդ խաղակէսին «Սելտան» յաջորդական 3 կոլ նշանակեց եւ եւ հաւասարեցաւ 3:3 արդիւնքով:

«Ռեալ» (12 խաղ) 27 կէտով առաջատարն է: Երկրորդ տեղը ընթացող «Ռեալ Սոսիտատ» (12 խաղ) ետ է 2 մկէտ: «Պարսելոնան» 17 կէտով 9-րդն է:

«Նափոլին» Միաւորներ Կորսնցուց, «Լացիոն» Խնդիրներ Չունեցաւ, «Ռոման» Պարտուեցաւ

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Napoli	12	10	2	0	24	4	20	32
2 Milan	12	10	2	0	26	11	15	32
3 Inter	12	7	4	1	29	13	16	25
4 Atalanta	12	6	4	2	22	15	7	22
5 Lazio	12	6	3	3	25	19	6	21
6 Roma	12	6	1	5	21	15	6	19

Իտալիոյ առաջնութեան 12-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» «Տիէպո Մարատոնայի անուան» մարզադաշտին վրայ մրցեցաւ «Վերոնայի» հետ եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

«Նափոլին» 32 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: 1 հանգրիպում պակաս խաղցած է: «Միլան» ետ է 1 կէտով:

Լացիոն» Հռոմի մէջ ընդունեց «Սալերնիտանային» եւ վստահ յաղթանակ արձանագրեց՝ 3:0 արդիւնքով:

«Ռոման» հիւրընկալուեցաւ «Վենեցիային» եւ պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» պահեստայիններու մէջն էր, սակայն խաղին չմասնակցեցաւ:

Դաւիթ Չալոյեան՝ Բռնցքամարտի Աշխարհի Փոխ-ախոյեան



Հայաստանի գերծանր քաշային բռնցքամարտիկ Դաւիթ Չալոյեան Սերպիոյ մէջ ընթացող աշխարհի առաջնութեան նուաճեց արծաթէ մետալ:


92 կգ քաշային բռնցքամարտիկը եզրափակիչ մրցամարտին ուժերը չափեց Մարկ Պետրովսկիի հետ: Չալոյեան հակառակ որ միաւորներով յաղթեց առաջին ռաունտը, սակայն 2-րդ եւ 3-րդ ռաունտներուն զիջեցաւ մրցակիցն եւ ի վերջոյ պարտուեցաւ 1:4 արդիւնքով:

Այսպիսով, Հայաստանի հաւաքականը աշխարհի առաջնութեան նուաճեց երկու մետալ՝ մէկ արծաթ եւ մէկ պրոնզ (Հովհաննէս Բաչկով): Վերջին անգամ Հայաստան աշխարհի առաջնութեան եզրափակիչի մասնակից ունեցած էր 2009 թուականին, երբ Անդրանիկ Յակոբեանը նոյնպէս հռչակուած էր փոխախոյեան:

Վազգէն Թեւանեան՝ Աշխարհի Մ-23 Փոխ Ախոյեան

Հայաստանի առաջատար ըմբիշներէն, աշխարհի գաւաթի ոսկէ մետալակիր, մինչեւ 23 տարեկաններու Եւրոպայի ախոյեան Վազգէն Թեւանեանը չկարողացաւ նուաճել Սերպիոյ մէջ ընթացող ազատ ոճի ըմբշամարտի մինչեւ 23 տարեկաններու աշխարհի ախոյեանի տիտղոսը:

70 կգ քաշային կարգի եզրափակիչին հայ ըմբիշը մրցեցաւ խրղզ էրնազար Ակմատալիււի հետ եւ պարտուեցաւ 2:10 արդիւնքով՝ նուաճելով մինչեւ 23 տարեկաններու աշխարհի առաջնութեան արծաթէ մետալը:



Հայ Ըմբիշները 5 Մետալով Աւարտեցին Աշխարհի Մ-23 Ախոյեանութիւնը

Հայաստանի ազատ ոճի ըմբիշ Մարտին Սիմոնեան չյաջողեցաւ պրոնզէ մետալ նուաճել Սերպիոյ մէջ աւարտին մօտեցող ըմբշամարտի աշխարհի Մ-23 առաջնութեան:

Այսպիսով, Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի Մ-23 հաւաքականը աշխարհի առաջնութեան կը վերադառնայ 5 մետալով՝ 1 ոսկի, 1 արծաթ եւ 3 պրոնզ:

Նովակ Ջոկովիչը՝ Փարիզի «Մասթըրզի» Ախոյեան

Աշխարհի առաջին ռակէթ Նովակ Ջոկովիչ նուաճեց Փարիզի «Մասթըրզ» մրցաշարի ախոյեանի տիտղոսը: Եզրափակիչին սերպ թենիսիստը 2 ժամ 16 վայրկեանէն պարտութեան մատնեց ռուս Տանիլի Մեդվեդեւին՝ 4:6, 6:3, 6:3:

Ջոկովիչ առաջ անգամ աշխարհի նախկին առաջին ռակետ, սպանացի Ռաֆայել Նադալէն «Մասթըրզ» մրցաշարերու տիտղոսներու քանակով:

ՊՍԺ-ի Յաղթանակին Նեյմարի Եւ Սփապի Կոլերուն Շնորհիւ

Ֆրանսայի առաջնութեան 13-րդ հանգրուանին ՊՍԺ-ն հիւրընկալուեցաւ «Պորտոյի» կողմէ եւ յաղթանակ արձանագրեց 3:2 արդիւնքով:

Երկու կոլի հեղինակ դարձաւ պրագիլեացի յարձակող Նեյմար: Աչքի ինկաւ նաեւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն:

Նեյմարը 400-րդ եւ 401-րդ կոլերը նշանակեց իր արհեստավարժ կայնքի ընթացքին իսկ 90-րդ կոլը՝ ՊՍԺ-ի կազմէն:

ՊՍԺ-ն 34 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 10 միաւոր առաջ է երկրորդ տեղը ընթացող «Լանսէն»:

Շքեղ ճաշկերույթով նշուեցաւ ՀԱՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակը



ԱՅՍ ԷԶԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԷ ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆԸ